Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 25-ի N 611 -Ա որոշման

Հավելված N 3
2024 թվականի ապրիլի -ի N —
«Ծրագրի իրականացման» պայմանագրի

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ,

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ,

«ՌԵՆՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵՐԵՎԱՆ [•] [•], 2024 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ 4

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ (ԱՈՒԴԻՏԻ) ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ... 4

III. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ 6

IV. ԽՈՐՀՈՒՐԴԸ 6

V. ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ 8

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ 9

VII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ 9

VIII. ՀԱՅՓՈՍՏԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ 10

IX. ՌԵՆՇԻՆԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ 13

X. ՌԵՆՇԻՆԻ ԵՎ ՀԱՅՓՈՍՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ14

XI. ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 14

XII. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 15

XIII. ՎԱՃԱՌՔԻ ՕՊՑԻՈՆ 19

XIV. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ ԿԱՄ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄԸ 20

XV. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 21

XVI. ԾՐԱԳՐԻ ՁԱԽՈՂՈՒՄՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 22

XVII. ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆ 24

XVIII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25

XIX. ՆՈՐ ԲԱԺՆԵՏԵՐ 26

XX. ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 26

XXI. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ 26

XXII. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ 28

XXIII. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) 29

XXIV. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ 30

XXV. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 33

XXVI. ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ 33

XXVII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 34

XXVIII. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 34

XXIX. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ 34
XXX. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 35
XXXI. ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼԵԶՈՒ 35
XXXII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ 35

Սույն Բաժնետիրական Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքված է

Հայաստանի Հանրապետության, ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետություն կամ Կառավարություն),

«Հայփոստ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Հայփոստ),

«Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ռենշին),

և

«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև (այսուհետ՝ Կառավարությունը, Հայփոստը, Ռենշինը, ինչպես նաև հետագայում սույն Համաձայնագրին միացած՝ Ընկերության այլ բաժնետերերը միասին կկոչվեն Բաժնետերեր, Բաժնետերերն ու Ընկերությունը միասին կկոչվեն Կողմեր, իսկ միայն մեկ կողմը վկայակոչվելու դեպքում՝ Կողմ),

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Կառավարությունն իր 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հավանություն է տվել Ռենշինի կողմից ներկայացված՝ Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր), որի իրականացման ժամանակացույցը, բյուջեն և բնութագիրը կցված է սույն Համաձայնագրին որպես դրա անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 2,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2024թ.-ի [---]ի [---]ին Հայաստանի Հանրապետության և «Ռենշին» ՍՊԸ-ի միջև կնքվել է Ծրագրի իրականացման պայմանագիրը (այսուհետ՝ Ծրագրի իրականացման պայմանագիր),

ՈՒՍՏԻԵՎ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համար Ծրագրի իրականացման կարևորությունը, սույն Համաձայնագրով Կողմերը պայմանավորվում են հետևյալի մասին.

I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38.1 հոդվածի՝ Կողմերը սույն Համաձայնագրով պայմանավորվում են Ընկերության բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին:

1.2. Սույն Համաձայնագրով Բաժնետերերը պայմանավորվում են իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակում գործել բարեխղճորեն՝ ելնելով Ընկերության շահերից և Ծրագրի բարեհաջող իրականացման նպատակից:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ (ԱՈՒԴԻՏԻ) ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ Ժողով):

2.2. Ընկերությունում մշտապես պետք է գործի 5 (հինգ) անդամներից բաղկացած Ընկերության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

2.3. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ Ընկերության միանձնյա գործադիր մարմնի՝ գլխավոր տնօրենի (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն) և Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի՝ տնօրինության (այսուհետ՝ Տնօրինություն) միջոցով, որը ղեկավարում է Գլխավոր տնօրենը:

2.4. Ընկերության հիմնադիր ժողովը պետք է Ծրագրի իրականացման պայմանագրի հավելվածով սահմանված ձևով հաստատի Ընկերության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն), որով միայն Ժողովին են վերապահվում Օրենքով Ժողովին վերապահված բացառիկ իրավասությունները: Այն բոլոր իրավասությունները, որոնք Օրենքը թույլատրում է վերապահել Խորհրդին, Կանոնադրությամբ վերապահվում են Խորհրդին, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով կամ Կանոնադրությամբ:

2.5. Կանոնադրությամբ Գլխավոր տնօրենին և Տնօրինությանն են վերապահվում այն բոլոր իրավասությունները, որոնք Օրենքը թույլատրում է Խորհրդից փոխանցել ու վերապահել Ընկերության գործադիր մարմնին, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով կամ Կանոնադրությամբ:

2.6. Ընկերությունում ներքին աուդիտ և/կամ վերստուգող (վերստուգող հանձնաժողով) կարող է չձևավորվել (չընտրվել), քանի դեռ այլ բան չի որոշվում Խորհրդի կողմից: Այդուհանդերձ, Կառավարությունն իրավունք ունի դրանց երկուսի բացակայության դեպքում ցանկացած ժամանակ պահանջել Ընկերության ներքին աուդիտի կամ վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) ձևավորում/ընտրություն, իսկ դրանցից առնվազն մեկի ձևավորված, բայց թափուր լինելու դեպքում՝ համապատասխան պաշտոնի համալրում, որի դեպքում մյուս բոլոր Կողմերը պարտավոր են ձեռնարկել իրենց իրավասությունների շրջանակների մեջ մտնող գործողությունները (այդ թվում՝ ապահովեն իրենց կողմից առաջադրված Խորհրդի անդամների կողմից համապատասխան գործողությունների կատարումը) հնարավորինս սեղմ ժամկետներում այդ պահանջի համաձայն Ընկերությունում ներքին աուդիտ և/կամ վերստուգող (վերստուգող հանձնաժողով) ընտրելու համար: Ընդ որում, եթե իրար հաջորդող 2 (երկու) քվեարկության արդյունքում չի հաջողվում նշանակել/ընտրել համապատասխան թեկնածուին, ապա Կառավարությունն իրավասու է առաջադրել և նշանակել (այդ թվում՝ մյուս կողմերից պահանջել քվեարկել նրա օգտին) ներքին աուդիտի կամ վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամի) որևէ թեկնածու, ով պետք է անպայմանորեն ունենա «Certified Internal Auditor» որակավորում և/կամ «Global Internal Audit Stadards»-ով աուդիտ իրականացնելու փաստացի փորձ:

2.7. Սույնով Կողմերը համաձայնում են, որ Ընկերությունում արտաքին աուդիտ հրավիրվելու պարագայում այն պետք է իրականացվի Միջազգային հաշվապահական տեղեկագրի (International Accounting Bulletin) կողմից www.nridigital.com կայքում (օրինակ հղումը 2023 թվականի համար՝ https://accounting.nridigital.com/iab_ws23/audit_and_assurance) տվյալ տարվա համար հրապարակված վարկանիշային ցուցակի առաջին տասնյակի մեջ մտնող կազմակերպություններից որևէ մեկի կողմից: Արտաքին աուդիտի ընտրության և վարձատրության պայմանների որոշման կարգը սահմանվում է Ընկերության Կանոնադրությամբ:

III. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

3.1. Ընկերության Ժողովի իրավասությունները և լիազորությունները, քվեարկության, ծանուցման, որոշումների ընդունման, Ժողովների հրավիրման կարգը և ժամկետները սահմանված են Կանոնադրությամբ և Օրենքով՝ ի լրումն սույն Համաձայնագրով սահմանված հարցերի:

3.2. Ժողովին մասնակցելու և ձայնի իրավունք ունեն Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը: Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից յուրաքանչյուրը բաժնետիրոջը տալիս է 1 ձայնի իրավունք, և առանց Կառավարության համաձայնության այլ բան չի կարող որոշվել Ընկերության Ժողովի կողմից, եթե դրա արդյունքում նվազում է Կառավարության ձայների տոկոսը ձայների ընդհանուր քանակում, բացառությամբ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերի:

3.3. Որպես կանոն, Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ այն որոշումների, որոնց համար ձայների առավել մեծ քանակ է սահմանված Օրենքով, Կանոնադրությամբ և/կամ սույն Համաձայնագրով:

3.4. Եթե սույն Համաձայնագրով (այդ թվում՝ սույն Համաձայնագրի **Error! Reference source not found.**-րդ կետով նախատեսված դեպքում) կամ Կանոնադրությամբ որևէ հարցով որոշման կայացման համար պահանջվում է Կառավարության համաձայնությունը, ապա Ընկերության մյուս Բաժնետերերը պարտավոր են զերծ մնալ այդպիսի հարցով որոշման կայացումից, եթե Կառավարությունը ներկայացված չէ Ժողովին կամ դեմ է քվեարկել այդպիսի որոշմանը: Այնուամենայնիվ, եթե Կառավարությունը ծանուցված է եղել նշված հարցը ներառող օրակարգով Ժողովի անցկացման մասին, և նշված հարցով որոշումը 2 (երկու) անգամ չի ընդունվել Կառավարության ներկայացուցչի՝ Ժողովին չմասնակցելու պատճառով, ապա Ընկերության Կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրավիրված հաջորդ Ժողովում մյուս Բաժնետերերն իրավունք ունեն Ընկերության Կանոնադրությամբ սահմանված կարգով այդ հարցով որոշում կայացնել՝ առանց Կառավարության համաձայնության կամ կողմ քվեարկության: Ընդ որում, նախորդ նախադասությամբ սահմանված կանոնը գործում է պայմանով, որ համապատասխան հարցով հրավիրված առաջին և երկրորդ Ժողովների անցկացման ժամկետների միջև առկա է առնվազն 20 (քսան) օրացուցային օրվա տարբերություն:

IV. ԽՈՐՀՈՒՐԴԸ

4.1. Խորհրդի 5 (հինգ) անդամներից առնվազն 3 (երեք) անդամ մշտապես առաջադրվելու են Ռենշինի կողմից, 1-ական անդամ էլ՝ Կառավարության և Հայփոստի կողմից, քանի դեռ վերջիններս հանդիսանում են Ընկերության բաժնետեր: Այն պահից, երբ Հայփոստին պատկանող Ընկերության բոլոր բաժնետոմսերը ձեռք կբերվեն Ռենշինի կողմից (տես՝ Բաժին VIII), Հայփոստի ներկայացուցչի լիազորությունները որպես Խորհրդի անդամ դադարում են: Այդ պարագայում Խորհրդի համապատասխան թափուր տեղում թեկնածու առաջադրելու իրավասությունը փոխանցվում է Ռենշինին: Միևնույն ժամանակ Ընկերության Բաժնետերերը սույնով ամրագրում և անվերապահորեն համաձայնում են, որ կողմ քվեարկության և բոլոր

անհրաժեշտ այլ գործողություններով պարտավոր են ապահովել Ժողովի կողմից Խորհրդի անդամի այն թեկնածուի նշանակումը համապատասխան պաշտոնին, որոնց կառաջադրի Ռենշինը՝ համաձայն սույն Համաձայնագրով և Կանոնադրությամբ սահմանված կարգի: Նույն կարգը (ներառյալ՝ Բաժնետերերի համապատասխան պարտավորությունները) գործում է նաև Կառավարության և Հայփոստի կողմից առաջադրված Խորհրդի անդամների համար: Ընդ որում, Բաժնետերերից յուրաքանչյուրն իրավունք ունի օգտվելու Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր իրավունքից և առանց ընտրության խորհրդում նշանակել իր ներկայացուցչին՝ բացառապես սույն կետով սահմանված խորհրդի անդամների առաջադրման (ընտրության) պայմաններն ապահովելու նպատակով:

4.2. Խորհրդի իրավասությունները և լիազորությունները սահմանվում են Ընկերության Կանոնադրությամբ՝ հիմք ընդունելով սույն Համաձայնագրի 2.4-րդ կետով սահմանված տրամաբանությունը:

4.3. Խորհրդի քվեարկության, նիստերի ծանուցման, որոշումների ընդունման, նիստերի հրավիրման կարգը և ժամկետները, ինչպես նաև Խորհրդին վերաբերող այլ հարցեր սահմանվում են Կանոնադրությամբ և/կամ Ընկերության ներքին իրավական այլ ակտերով:

4.4. Եթե սույն Համաձայնագրով կամ Կանոնադրությամբ որևէ հարցով որոշման ընդունման համար պահանջվում է Կառավարության (կամ Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի) համաձայնությունը կամ կողմ քվեարկելը, ապա մյուս Բաժնետերերը պարտավոր են ապահովել, որպեսզի իրենց կողմից առաջադրված Խորհրդի անդամները զերծ մնան այդպիսի հարցով որոշման կայացումից, եթե Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամը չի մասնակցում Խորհրդի նիստին կամ դեմ է քվեարկել այդպիսի որոշմանը: Եթե Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամը ծանուցված է եղել նշված հարցը ներառող օրակարգով Խորհրդի նիստի մասին և նշված հարցով որոշումը չի ընդունվել Կառավարության կողմից առաջադրված անդամի 2 (երկու) անգամ անհարգելի պատճառով չմասնակցելու հետևանքով, ապա Ընկերության Կանոնադրությամբ հաջորդ Խորհրդի նիստում, Խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն Ընկերության Կանոնադրությամբ սահմանված կարգով այդ հարցով կայացնել որոշում՝ առանց Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի համաձայնության կամ կողմ քվեարկության: Ընդ որում, նախորդ նախադասությամբ սահմանված կանոնը գործում է պայմանով, որ համապատասխան հարցով հրավիրված առաջին և երկրորդ Խորհրդի նիստերի անցկացման ժամկետների միջև առկա է առնվազն 10 (տասը) օրացուցային օրվա տարբերություն:

4.5. Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի 3 (երեք) անգամ հարգելի պատճառով նիստին չմասնակցելու կամ հնարավոր երկարատև հարգելի բացակայության դեպքերում, Խորհուրդը՝ իր որոշմամբ, սույն Համաձայնագրով կամ Կանոնադրությամբ սահմանված Կառավարության (կամ Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի) համաձայնությունը պահանջող հարցի որոշման իրավասությունը, փոխանցում է Ժողովին: Այդ պարագայում համապատասխան որոշումները Ժողովի կողմից ընդունվում են Կառավարության համաձայնությամբ՝ Ընկերության Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 3.4-րդ կետով սահմանված կարգավորումները:

4.6. Սույն Բաժնի և Ընկերության Կանոնադրության իմաստով Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի բացակայությունը Խորհրդի նիստին համարվում է հարգելի,

եթե բացակայության հիմքերը (պատճառները) օբյեկտիվորեն համարվում են այդպիսին և վերջինս Խորհրդի նիստին չմասնակցելու իր հիմքերի (պատճառների) մասին տեղեկացրել է Ընկերության Տնօրինությանը և Խորհրդի մյուս անդամներին, ոչ ուշ քան չմասնակցելու հիմք հանդիսացող հանգամանքն ի հայտ գալու և/կամ դեպքը տեղի ունենալու հաջորդ օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքների բերումով Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի կողմից օբյեկտիվորեն հնարավոր չի եղել իր բացակայության մասին տեղեկացնել սույն կետում նշված անձանց: Այնուամենայնիվ, սույն կետով սահմանված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամն իր բացակայության հիմքերի (պատճառների) մասին պարտավոր է ոչ ուշ քան նման հանգամանքների վերացումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Ընկերության Տնօրինությանը և Խորհրդի մյուս անդամներին: Մնացած բոլոր դեպքերում Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի բացակայությունը, Խորհրդի նիստի մասին պատշաճ ձևով ծանուցված լինելու դեպքում, կհամարվի անհարգելի:

V. ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ընկերության Տնօրինությունը պետք է բաղկացած լինի առնվազն երեք անդամից՝ ներառյալ Գլխավոր տնօրենը: Տնօրինության բոլոր անդամները, ներառյալ՝ Գլխավոր տնօրենը, մշտապես հանդիսանալու են Ռենշինի կողմից առաջադրված թեկնածուները, որոնց նշանակելու վերաբերյալ որոշումներն ընդունվում են Խորհրդի կողմից: Ընդ որում, Կողմերը սույնով ամրագրում և անվերապահորեն համաձայնում են, որ Խորհրդի անդամներն իրենց կողմ քվեարկության և բոլոր անհրաժեշտ այլ գործողություններով պարտավորվում են ապահովել, որ Ռենշինի կողմից առաջադրված Տնօրինության անդամի թեկնածուները նշանակվեն համապատասխան պաշտոնին՝ համաձայն սույն Համաձայնագրով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգի:

5.2. Ընկերության Տնօրինության կազմը, այն է՝ Տնօրինության մեջ մտնող Տնօրինության անդամների քանակը, ինչպես նաև նրանց պաշտոնները և/կամ գործառույթները սահմանում է Գլխավոր տնօրենը:

5.3. Տնօրինությանը վերապահված իրավասությունները և լիազորությունները սահմանվում են Ընկերության Կանոնադրությամբ՝ հիմք ընդունելով սույն Համաձայնագրի 2.5-րդ կետով սահմանված տրամաբանությունը: Այնուամենայնիվ, Տնօրինության, իսկ վերջինիս որոշմամբ սահմանված դեպքերում՝ Գլխավոր տնօրենի իրավասությանն է պատկանում Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 (հիսուն) և ավելի տոկոսը չգերազանցող գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ կապված գործարքներ կնքելու որոշման ընդունումը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:

5.4. Տնօրինության որոշումների ընդունման, Տնօրինության նիստերի հրավիրման կարգը և ժամկետները, ինչպես նաև Տնօրինությանը վերաբերող այլ հարցեր սահմանվում են Կանոնադրությամբ և/կամ Ընկերության ներքին իրավական այլ ակտերով, որոնք Տնօրինության ներկայացմամբ ենթակա են հաստատման Խորհրդի կողմից:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

6.1. Սույն Համաձայնագրի Կողմերն անվերապահորեն համաձայնում և սահմանում են, որ Ընկերությունում շահութաբաժինները բաշխվում են, իսկ շահութաբաժնային քաղաքականությունն ընդունվում է հետևյալ սկզբունքների/պայմանների հիման վրա. ***<u>Շահույթի բաշխում՝ ոչ պակաս քան Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններով սահմանված շահույթի 50 (հիսուն) տոկոսի չափով, սակայն ոչ ավելի քան Ընկերության ազատ դրամական միջոցների 75 (յոթանասունհինգ) տոկոսը:</u>***

6.2. Կողմերը համաձայնում են, որ առանց Կառավարության համաձայնության կամ Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամի կողմ քվեարկության, Ընկերությունը չի կարող իրականացնել հեստապարային ակումբի և/կամ խաղատների կազմակերպման գործունեություն:

6.3. Կողմերը համաձայնում են, որ Կանոնադրության իմաստով Ընկերության Խորհրդի նախագահի, ինչպես նաև Խորհրդի անդամներից յուրաքանչյուրի վարձատրության սահմանաչափ է համարվում «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-66-Ն, ընդունված՝ 17.12.2003թ.-ին) սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի երեսնապատիկը:

VII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

7.1. Կառավարությունն իրավասու է ազատորեն տնօրինելու Ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերը, ինչպես նաև ցանկացած պահի դուրս գալու Ընկերությունից՝ օտարելով Ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերն ամբողջությամբ կամ մասամբ՝ համաձայն սույն Համաձայնագրով և Օրենքով սահմանված պահանջների և կարգավորումների: Այնուամենայնիվ, Կառավարությունը չի կարող իրեն սեփականությամբ պատկանող Ընկերության բաժնետոմսերը (ամբողջությամբ կամ մասամբ) օտարել հրապարակային բաժանորդագրության սկզբունքով կամ այնպիսի եղանակով, որը կհանգեցնի Ընկերության՝ բաց բաժնետիրական ընկերություն վերակազմավորվելու անհրաժեշտությանը:

7.2. Ընդ որում, Կողմերը պայմանավորվում են, որ մինչև Ծրագրի ավարտը[1] (ներառյալ սույն Համաձայնագրով թույլատրելի շեղման ժամկետը) Կառավարության կողմից իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերի օտարումը չի դադարեցնում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով և Բաժին XIII-ով նախատեսված կարգավորումները՝ դրանք փոխանցելով այն անձին/անձանց, ում օտարվել են բաժնետոմսերը, բացառությամբ եթե Ռենշինը գրավոր կերպով հրաժարվել է այդ Բաժիններով իրեն վերապահված իրավունքներից: Սույն կետով սահմանված կարգավորումը գործում է միայն այն դեպքում, եթե Ռենշինի գործողությունների կամ անգործության հետևանքով չի խախտվել սահմանված Ծրագրի ավարտը (ներառյալ՝ սույն Համաձայնագրով թույլատրելի շեղումների):

[1] Ծրագրի ավարտ է համարվում Ծրագրի շրջանակներում կառուցվող համալիրի (այսուհետ՝ Համալիր) շահագործման թույլտվության ստացումը:

VIII. ՀԱՅՓՈՍՏԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

8.1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 8.6-րդ կետի դրույթները, Ռենշինի կողմից Ծրագրի մեկնարկից[2] սկսած 5 (հինգ) տարվա ընթացքում Հայփոստին պատկանող Ընկերության 6,788,000 (վեց միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ենթակա են Հայփոստի կողմից վաճառքի և Ռենշինի կողմից ձեռքբերման՝ սույն Պայմանագրով սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան՝ հետևյալ ժամանակացույցով և պայմաններով.

Կառուցապատման փուլերը	**Փուլի նկարագրությունը**	**Վաճառքի ենթակա բաժնետոմսերի քանակը (հատ)**	**Մեկ բաժնետոմսի առուվաճառքի արժեքը (ՀՀ դրամ)**	**Բաժնետոմսերի առուվաճառքի ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ)**
1-ին փուլ	Շենքի քանդման աշխատանքների մեկնարկ, բայց ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցմանը և կանոնադրական կապիտալի ամբողջական համալրմանը հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի ավարտ	1,357,600	1,000	1,357,600,000
2-րդ փուլ	Համալիրի շինարարության թույլտվության ստացում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին	1,357,600	1,000	1,357,600,000

[2] Ծրագրի մեկնարկ է համարվում ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք, 2 շինություն և ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք հասցեներում գտնվող անշարժ գույքերի (այսուհետ՝ Շենք) քանդման աշխատանքերի մեկնարկը, իսկ եթե քանդման թույլտվությունը տրվել է Ընկերության պետական գրանցմանը և կանոնադրական կապիտալի ամբողջական համալրմանը հաջորդող 12-ամսյա ժամկետի ավարտից ավելի ուշ՝ ապա Ծրագրի մեկնարկ է համարվում քանդման թույլտվության տրման պահը (ընդ որում, եթե նույն 12-ամսյա ժամկետում Ընկերությունն օրենքին համապատասխանող դիմում չի ներկայացրել քանդման թույլտվություն ստանալու համար, ապա Ծրագրի մեկնարկ է համարվում այդ 12-ամսյա ժամկետի ավարտը):

	հաջորդող 24-ամսյա ժամանակահատված ի ավարտ			
3-րդ փուլ	Համալիրի երկաթ-բետոնե կարկասի 50%-ի կառուցում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 36-ամսյա ժամանակահատված ի ավարտ	1,357,600	1,000	1,357,600,000
4-րդ փուլ	Համալիրի երկաթ-բետոնե կարկասի 100%-ի կառուցում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 48-ամսյա ժամանակահատված ի ավարտ	1,357,600	1,000	1,357,600,000
5-րդ փուլ	Համալիրի շինարարության ավարտական ակտի ստացում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 57-ամսյա ժամանակահատված ի ավարտ	1,357,600	1,000	1,357,600,000

8.2. Սույն Համաձայնագրի 8.1-րդ կետով սահմանված կարգով ձեռքբերում իրականացնելու համար Ռենշինը պարտավորվում է սույն Համաձայնագրի 8.1-րդ կետում նշված համապատասխան փուլն ավարտվելուց (կամ այդ կետում նշված վերջնաժամկետը վրա հասնելուց, եթե այդ օրվա դրությամբ փուլը դեռ չի ավարտվել) հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցել Հայփոստին: Վերջինս համապատասխան ծանուցումը ստանալուն պես 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է համապատասխան արժեթղթերի հաշվի օպերատորի միջոցով ներկայացնել ժամանակացույցով նախատեսված քանակի բաժնետոմսերը Ռենշինին փոխանցելու հանձնարարական (որը, սույն Համաձայնագրի հետ միասին, բավարար հիմք է հանդիսանում բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը Հայփոստից Ռենշինին փոխանցելու համար): Ռենշինն ամեն անգամ պարտավոր կլինի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն իրեն փոխանցվելու (բաժնետոմսերը Ռենշինի արժեթղթերի հաշվին գրանցվելու) պահից առավելագույնը 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում վճարել սույն Համաձայնագրով սահմանված հետգնման ենթակա բաժնետոմսերի գինը: Բաժնետոմսերը սույն կետով սահմանված ժամկետում Ռենշինին չփոխանցելու համար կիրառվում է

(Հայփոստի կողմից Ռենշինին է վճարվում) տույժ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ տվյալ փուլում փոխանցման ենթակա բաժնետոմսերի վաճառքի գնի 0.06 (զրո ամբողջ վեց հարյուրերորդական) տոկոսի չափով, սակայն ոչ ավելին քան տվյալ փուլում հետգնման բաժնետոմսերի գինը, մինչև Հայփոստի կողմից ժամանակացույցով նախատեսված համապատասխան քանակի բաժնետոմսերի փաստացի փոխանցումը: Ընդ որում, Ռենշինն իրավունք ունի անակցեպտ ձևով նվազեցնել սույն կետով սահմանված տույժի գումարը տվյալ փուլում փոխանցման ենթակա բաժնետոմսերի վաճառքի գնից և վճարել տվյալ փուլում փոխանցման ենթակա բաժնետոմսերի վաճառքի գնի մնացած մասը՝ որպես փոխանցված բաժնետոմսերի դիմաց հատուցում: Ռենշինի կողմից վճարման կետանցի դեպքում Հայփոստը կարող է պահանջել տույժի վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կետանցված գումարի 0.06 (զրո ամբողջ վեց հարյուրերորդական) տոկոսի չափով, սակայն ոչ ավելին քան տվյալ փուլում հետգնման բաժնետոմսերի գինը:

8.3. Հայփոստի գրավոր դիմումի հիման վրա և Ռենշինի համաձայնությամբ վերջինս կարող է սույն Համաձայնագրի 8.1-րդ կետում նշված ժամանակացույցով նախատեսված ժամկետից շուտ ձեռք բերել Հայփոստի բաժնետոմսերը կամ դրանց մի մասը:

8.4. Այն պահից, երբ Ռենշինն ամբողջությամբ ձեռք կբերի Հայփոստին սեփականության իրավունքով պատկանող Ընկերության բոլոր բաժնետոմսերը (այդ բաժնետոմսերը պատշաճ կերպով կգրանցվեն Ռենշինի արժեթղթերի հաշվին), Հայփոստը կդադարի սույն Համաձայնագրին Կողմ հանդիսանալուց և վերջինիս համար կդադարեն սույն Համաձայնագրով սահմանված իրավունքները և պարտականությունները՝ առանց որևէ այլ լրացուցիչ ձևակերպումների և փաստաթղթերի, բացառությամբ սույն Համաձայնագրի Բաժին XXI-ով, XXII-ով, XXV-ով և XXXII-րդ սահմանված կարգավորումների, որոնք կգործեն անկախ Հայփոստի՝ Ընկերության բաժնետեր հանդիսանալու հանգամանքից:

8.5. Սույն Բաժնով սահմանված Հայփոստի բաժնետոմսերը Ռենշինի կողմից ձեռք բերելիս Ընկերությունը և Ընկերության մյուս բաժնետերերը (այդ թվում՝ Կառավարությունը) չեն կարող օգտվել Օրենքով սահմանված իրենց նախապատվության իրավունքից, և պարտավոր են սեղմ ժամկետում կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, ներառյալ տրամադրել համապատասխան հրաժարումներ և/կամ համաձայնություններ, սույն Բաժնով սահմանված Հայփոստի բաժնետոմսերի փոխանցման կատարման կապակցությամբ:

8.6. Այնքան ժամանակ, քանի դեռ Ռենշինին պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակը պակաս չէ Ընկերության հիմնադրման պահին Կառավարությանը պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակից, սույն Բաժնով սահմանված կարգով և ժամկետներում Ընկերությունում Հայփոստին պատկանող քվեարկող բաժնետոմսերը ձեռք բերելու պարտականությունն ամբողջությամբ կրում է Ռենշինը: Ռենշինին պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակը Ընկերության հիմնադրման պահին Կառավարությանը պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակից պակասելու դեպքում (պայմանով, որ բաժնետոմսերի համապատասխան վաճառքը տեղի է ունեցել սույն Համաձայնագրին համապատասխան), Ռենշինը և այն անձը (անձինք), ում փոխանցվել է (են) Ռենշինի համապատասխան բաժնետոմսերը, կրում են սույն Բաժնով սահմանված կարգով Հայփոստի քվեարկող բաժնետոմսերը (համապատասխան համամասնությամբ) ձեռք բերելու պարտականությունը: Կասկածից խուսափելու համար, Ռենշինի կողմից սույն Բաժին VIII-ով

սահմանված պարտականությունը դադարում է այն պահից, երբ Ռենշինը դադարում է Ընկերության բաժնետեր լինելուց:

IX. ՌԵՆՇԻՆԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

9.1. Ռենշինն իրավասու է Ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերով ազատորեն կնքել ցանկացած օտարման գործարք՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության Կանոնադրությամբ սահմանված նախապատվության պահանջները, այդ թվում՝ առանց Կառավարության նախնական համաձայնության օտարել Ընկերությունում իրեն պատկանող քվեարկող բաժնետոմսերը, պայմանով, որ օտարման արդյունքում Ռենշինին պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակը մինչև Ծրագրի ավարտին հաջորդող 3-ամյա ժամանակահատվածի ավարտը չի նվազի Ընկերության հիմնադրման պահին Կառավարությանը պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակից: Մինչև Ծրագրի ավարտին հաջորդող 3-ամյա ժամանակահատվածի ավարտը նախորդ նախադասությամբ սահմանված չափից ավելի օտարման ցանկության դեպքում Ռենշինը պարտավոր է ստանալ Կառավարության համաձայնությունը սույն Համաձայնագրի 9.4-րդ կետով սահմանված կարգով, որը չի կարող անհիմն մերժվել կամ ձգձգվել: Այդուհանդերձ, Ռենշինի որևէ բաժնետոմս չի կարող փոխանցվել որևէ անձի, որը, կամ որի իրական շահառուն կամ իրական (փաստացի) հսկողություն իրականացնող անձը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանդեպ սպառնալիք ներկայացնող պետության քաղաքացի կամ իրավաբանական անձ կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին է:

9.2. Ընդ որում, Կողմերը պայմանավորվում են, որ Ռենշինի կողմից իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերն օտարելը, մինչև Ծրագրի ավարտը (ներառյալ՝ սույն Համաձայնագրով թույլատրելի շեղման ժամկետը) չի դադարեցնում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով, Բաժին XIII-ով, Բաժին XVI-ով, Բաժին XVII-ով նախատեսված կարգավորումները՝ մինչև այն պահը, երբ Ծրագիրը կավարտվի (սույն Համաձայնագրի 16.1.3-րդ կետով նախատեսված իրադարձությունների մասով՝ կանցնի դրանում նշված ժամկետը), կամ Կառավարությունը գրավոր կհրաժարվի այդ բաժիններով իրեն վերապահված իրավունքներից: Ռենշինի կողմից իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերի օտարման պահից նոր բաժնետիրոջն են փոխանցվում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով և Բաժին XIII-ով նախատեսված Ռենշինի իրավունքներն ու պարտականությունները (մասնակի վաճառքի դեպքում՝ գնված բաժնետոմսերի քանակին համամասնորեն), ինչպես նաև սույն Համաձայնագրով սահմանված Ռենշինի պարտավորությունները (մասնակի վաճառքի դեպքում՝ գնված բաժնետոմսերի քանակին համամասնորեն):

9.3. Բացառությամբ սույն Համաձայնագրի Բաժին XII-ով և Բաժին XIII-ով նախատեսված Ռենշինի իրավունքների ու պարտականությունների՝ Ռենշինը պետք է զերծ մնա Ժողովի միջոցով այնպիսի որոշում կայացնելուց, որով Ընկերության կողմից և/կամ Ընկերության հաշվին հետ կգնվեն (ամբողջությամբ կամ մասամբ) Ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերը:

9.4. Սույն Համաձայնագրի 9.1-րդ կետով սահմանված դեպքում համաձայնություն ստանալու նպատակով Ռենշինը պարտավոր է համապատասխան բաժնետոմսերի օտարումը նախաձեռնելուց առաջ գրավոր կերպով և սույն Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգով դիմել Կառավարությանը՝ ներկայացնելով տեղեկություններ գնորդի, վերջինիս իրական շահառուների և նրանց մասնակցության ամբողջ շղթայի վերաբերյալ: Կառավարությունը, Ռենշինից ստանալով

համապատասխան նամակը, պարտավոր է ոչ ուշ քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կերպով և սույն Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգով Ռենշինին տեղեկացնել բաժնետոմսերն օտարելու վերաբերյալ իր կողմից համաձայնություն տրամադրելու կամ չտրամադրելու մասին: Սույն կետով սահմանված ժամկետում Ռենշինին համապատասխան գրավոր կերպով և Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգով համաձայնության տրամադրումը կամ դրա մերժումը բովանդակող պատասխան չտրամադրելու դեպքում համարվում է, որ Կառավարությունը, սույն Համաձայնագրի 9.1-րդ կետի իմաստով, տվել է իր համաձայնությունը և չունի որևէ առարկություն Ռենշինի կողմից Ընկերության իր բաժնետոմսերն օտարելու վերաբերյալ:

X. ՌԵՆՇԻՆԻ ԵՎ ՀԱՅՓՈՍՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ռենշինն ու Հայփոստը իրավասու են առանց որևէ Բաժնետիրոջ համաձայնության ազատորեն վերակազմակերպվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով:

10.2. Ռենշինի և/կամ Հայփոստի վերակազմակերպման դեպքում սույն Համաձայնագրով սահմանված իրավունքները և պարտականությունները համապատասխան փոխանցման ակտի կամ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռի համաձայն փոխանցվում են համապատասխան իրավահաջորդ հանդիսացող անձին:

10.3. Ընդ որում, Կողմերը պայմանավորվում են, որ Ռենշինի վերակազմակերպման դեպքում, մինչև Ծրագրի ավարտը չեն դադարեցվում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով և Բաժին XIII-ով նախատեսված կարգավորումները՝ մինչև այն պահը, երբ Ծրագիրը կավարտվի, կամ Ռենշինը գրավոր կհրաժարվի այդ բաժիններով իրեն վերապահված իրավունքներից: Ռենշինի վերակազմակերպման պահից նոր բաժնետիրոջն են փոխանցվում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով և Բաժին XIII-ով նախատեսված Ռենշինի իրավունքները:

10.4. Ռենշինի և/կամ Հայփոստի վերակազմակերպման դեպքում մյուս Կողմերը չեն կարող օգտվել Օրենքով սահմանված իրենց նախապատվության իրավունքից կամ Ռենշինի վերակազմակերպման հետևանքով իրենց մոտ ծագած որևէ այլ իրավունքից և պետք է սեղմ ժամկետում կատարեն բոլոր անհրաժեշտ գործողությունները, ներառյալ տրամադրեն հրաժարումներ և/կամ համաձայնություններ այդ փոխանցման կատարման կապակցությամբ:

10.5. Սույն Բաժնով սահմանված Հայփոստի ազատ վերակազմակերպումը թույլատրելի է՝ պայմանով, որ դրա հետևանքով Հայաստանի Հանրապետությունը շարունակում է նույն չափով մնալ Հայփոստի կամ համապատասխան իրավահաջորդ ընկերության բաժնետեր (մասնակից), եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:

XI. ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

11.1. Օրենքով սահմանված կարգով Ընկերության յուրաքանչյուր Բաժնետեր, բացառությամբ Հայփոստի, օգտվում է Ընկերության կողմից նոր բաժնետոմսերի թողարկման դեպքում իր նախապատվության իրավունքից Ընկերությունում իր բաժնեմասնակցությանը համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:

11.2. Հաշվի առնելով, որ Ծրագրով, ինչպես նաև սույն Համաձայնագրի Բաժին VIII-ով նախատեսված է, որ Ծրագրի մեկնարկից սկսած 5 տարիների ընթացքում Հայփոստին պատկանող Ընկերության բաժնետոմսերը ենթակա են ձեռքբերման Ռենշինի կողմից, սույն Համաձայնագրի գործողության ընթացքում Հայփոստն ընդհանրապես, իսկ Կառավարությունը և Ընկերությունը՝ սույն Համաձայնագրի Բաժին VIII-ի համաձայն Հայփոստին պատկանող Ընկերության բաժնետոմսերը Ռենշինի կողմից ձեռքբերման ժամանակ, իրավասու չէ օգտվել Օրենքով սահմանված իր նախապատվության իրավունքից և պետք է սեղմ ժամկետում կատարի բոլոր անհրաժեշտ գործողությունները, ներառյալ տրամադրի համապատասխան հրաժարումներ և/կամ համաձայնություններ բաժնետոմսերի համապատասխան փոխանցման կատարման կապակցությամբ:

XII. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

12.1. Հաշվի առնելով Ծրագրի առանձնահատկությունները, ինչպես նաև դրա յուրաքանչյուր փուլին հատուկ ռիսկերը՝ Կողմերը ստորև առանձնացնում են հնարավոր բացասական իրադարձությունները (այսուհետ՝ Բացասական Իրադարձություն), որոնք կարող են ի հայտ գալ Ծրագրի իրականացման ընթացքում և, որոնց համար սույն Համաձայնագրով սահմանվում են որոշակի հետևանքներ.

12.1.1. պետական մարմնի որևէ գործողություն և/կամ անգործություն (այդ թվում՝ իրավական ակտի ընդունում), որի հետևանքով անհնարին է դառնում Համալիրի կառուցումը Ծրագրով նախատեսված ժամանակահատվածում (բացառությամբ, եթե ժամկետի երկարումը չի գերազանցում 12 (տասներկու) ամիսը) կամ անհնարին է դառնում Ծրագրի իրականացումը կամ անհրաժեշտ է դառնում դրա զգալի փոփոխություն: Այդպիսի գործողությունների/անգործության դասին են պատկանում առանց սահմանափակման, օրինակ՝

1) չի տրամադրվում ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք, 2 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի (այսուհետ՝ Անշարժ Գույք 1) և/կամ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք հասցեում գտնվող անշարժ գույքի (այսուհետ՝ Անշարժ Գույք 2) քանդման թույլտվություն, պայմանով, որ այդպիսի չտրամադրման հիմքում առկա չէ Ընկերության (այդ թվում՝ Ընկերության կողմից ներգրավված երրորդ անձանց) թերացումը.
2) արգելվում կամ կասեցվում են քանդման աշխատանքները կամ Համալիրի շինարարությունը.
3) շինարարական թույլտվության կամ Համալիրի կառուցման համար անհրաժեշտ որևէ այլ համաձայնության, թույլտվության կամ այլ փաստաթղթի հաստատման կամ տրամադրման մերժում, պայմանով, որ այդ մերժման հիմքում առկա չէ Ընկերության (այդ թվում՝ Ընկերության կողմից ներգրավված երրորդ անձանց) թերացումը.
4) Որոշումը ճանաչվում է ուժը կորցրած կամ դրանում առանց Ռենշինի հետ նախապես համաձայնեցնելու կատարվում է փոփոխություն.
5) գերակա շահ է ճանաչվում Ծրագրի ընթացքում կամ դրա իրականացման արդյունքում Ընկերությանը պատկանող կառուցվող կամ կառուցված գույքը, դրա որևէ մասը, պատկանելիքը, սպասարկող ենթակառուցվածքը (այսուհետ՝ Ընկերության Գույք).

6) Որոշման համաձայն Ծրագրի իրականացման նպատակով ք. Երևան, Սարյան և ք. Երևան, Պարոնյան փողոցների միջև (Սարյան 22 հասցեում գտնվող գույքին հարակից)՝ շուրջ 13,200.54 քմ մակերեսով (հաշվի առնելով հնարավոր ոչ էական շեղումները) հողամասը պետության կարիքների համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացը սահմանված կարգով և ժամկետներում չի նախաձեռնվում կամ չի իրականացվում, բացառությամբ այն դեպքերի, երբ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացի իրականացումը երկարաձգվում կամ ուշանում է համապատասխան հողամասի սեփականատիրոջ (սեփականատերերի) կամ այլ շահագրգիռ անձի կողմից հանրային շահ ճանաչելու հարցով ներկայացված հայց(եր)ի հետևանքով (սույն կետի իմաստով շահագրգիռ անձ չի հարմարվում որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային որևէ կազմակերպություն, որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմի կողմից վերահսկվող իրավաբանական անձ, Ռենշինի կամ Հայփոստի հետ փոխկապակցված որևէ անձ).

7) օրենսդրական փոփոխություններ:

12.1.2. Կառավարության և/կամ Հայփոստի կողմից տրամադրված հավաստումների խախտում, որի պատճառով անհնարին է դառնում Ծրագրի իրականացումը կամ անհրաժեշտ է դառնում դրա զգալի փոփոխություն:

12.1.3. Տեղական ինքնակառավարման մարմնի գործողություն և/կամ անգործություն (այդ թվում՝ իրավական ակտի ընդունում), որով անհնարին է դառնում Համալիրի կառուցումը Ծրագրով նախատեսված ժամանակահատվածում (բացառությամբ, եթե ժամկետի երկարումը չի գերազանցում 12 (տասներկու) ամիսը) կամ անհնարին է դառնում Ծրագրի իրականացումը կամ անհրաժեշտ է դառնում դրա զգալի փոփոխությունը: Այդպիսի գործողությունների/անգործության դասին են պատկանում առանց սահմանափակման, օրինակ՝

1) արգելվում/կասեցվում են քանդման աշխատանքները կամ Համալիրի շինարարությունը,
2) ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ԱՊՁ) կամ Համալիրի կառուցման համար անհրաժեշտ որևէ այլ համաձայնության, թույլտվության կամ այլ փաստաթղթի հաստատման կամ տրամադրման մերժում, պայմանով, որ այդ մերժման հիմքում առկա չէ Ընկերության (այդ թվում՝ Ընկերության կողմից ներգրավված երրորդ անձանց) թերացումը,
3) Որոշման համաձայն Ծրագրի իրականացման նպատակով ք. Երևան, Սարյան և ք. Երևան, Պարոնյան փողոցների միջև (Սարյան 22 հասցեում գտնվող գույքին հարակից)՝ շուրջ 13,200.54 քմ մակերեսով հողամասը պետության կարիքների համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացը սահմանված կարգով և ժամկետներում չի նախաձեռնվում կամ չի իրականացվում,
4) օրենսդրական փոփոխություններ:

12.1.4. Համալիրի շինարարության իրականացմանը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքների բացահայտում (օրինակ՝ պատմամշակութային հուշարձաններ, տեխնիկական կամ այլ խոչընդոտներ) որոնց առաջացումը կամ առկայությունը հետևանք չէ Ռենշինի, Կառավարության կամ Հայփոստի գործողության, անգործության կամ անփութության:

12.1.5. Անշարժ Գույք 1-ի և/կամ Անշարժ Գույք 2-ի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների (վարձակալություն, գրավ, այլ սահմանափակում, ծանրաբեռնում, հարկային կամ այլ պարտավորություն) կամ դրանց առաջացման հիմքերի

առկայություն Անշարժ Գույքերի նկատմամբ սեփականության իրավունքն Ընկերությանը փոխանցելու պահին:

12.2. Սույն Համաձայնագրի 12.1-րդ կետի իմաստով զգալի փոփոխություն է համարվում այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է Ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20 (քսան) տոկոս թանկացման, կամ Ծրագրի առանձին փուլի առնվազն 10 (տասը) տոկոս թանկացման, կամ 5 (հինգ) տոկոսը գերազանցող չափով Ծրագրի շրջանակներում կառուցապատվող մակերեսի պակասեցման կամ ավելացման, կամ Ծրագրի իրագործման ժամկետների երկարելուն առնվազն 12 (տասներկու) ամսով, կամ Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center) կառուցելու և/կամ շահագործելու պայմանների ապահովման անհնարինության: Զգալի փոփոխությունը համարվում է անհրաժեշտ, եթե առանց դրա Ծրագրի իրականացումը ողջամտորեն հնարավոր չէ:

12.3. Անկախ վերոգրյալից, Բացասական Իրադարձություն չի համարվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունը կամ անգործությունը (այդ թվում՝ Ընկերության որոշակի գործունեություն արգելելը կամ կասեցնելը), եթե այն կիրառելը հետևանք է Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների ակնհայտ խախտման, և դրանց կիրառումը չի հանդիսանում համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հայեցողական լիազորություն:

12.4. Բացասական Իրադարձություն առաջանալու դեպքում Ռենշինն ունի իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերը Կառավարությանը վաճառելու օպցիոնի իրավունք (այսուհետ՝ Վաճառքի Օպցիոն) սույն Բաժնով սահմանված ընթացակարգին և պայմաններին համապատասխան: Այնուամենայնիվ, սույն Բաժնի 12.1.4-րդ ենթակետով սահմանված Բացասական Իրադարձության դեպքում Վաճառքի Օպցիոնի իրավունք Ռենշինի համար չի առաջանում: Այս դեպքում Ռենշինը և Կառավարությունն առաջնորդվում են սույն Համաձայնագրի 12.10-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

12.5. Այն դեպքում, երբ տեղի են ունենում սույն Բաժնով նախատեսված Բացասական Իրադարձություններից մեկը կամ մի քանիսը, որոնք առաջացել են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ վերջինիս անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության հետևանքով (մասնավորապես՝ Համաձայնագրի 12.1.1-րդ և 12.1.2-րդ ենթակետերով նախատեսված Բացասական Իրադարձությունները), ապա մինչև Վաճառքի Օպցիոնի կիրառումը Ռենշինը Կառավարությանը ներկայացնում է Ծրագրի փոփոխման կամ ձևափոխման առաջարկ (այսուհետ՝ Փոփոխման Առաջարկ), եթե համապատասխան փոփոխությունը Ռենշինը հնարավոր է համարում: Այն դեպքում, երբ Ռենշինի ողջամտորեն հիմնավորված կարծիքով համապատասխան փոփոխությունը հնարավոր չէ ներկայացնել կամ դա իրատեսական չէ, վերջինս իրավունք ունի միանգամից կիրառել Վաճառքի Օպցիոնի իր իրավունքը: Նման դեպքում Ռենշինը պետք է իր կարծիքը, ներառյալ հիմնավորումները, մինչ Վաճառքի Օպցիոնի իր իրավունքն իրագործելը տրամադրի Կառավարությանը:

12.6. Կառավարությունը պարտավոր է Փոփոխման Առաջարկը քննարկել մեկամսյա ժամկետում ու Ռենշինին ներկայացնել Փոփոխման Առաջարկի վերաբերյալ իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Կառավարությունն իրավասու է նաև սույն կետով նախատեսված մեկամսյա ժամկետում Ռենշինին հրավիրել Փոփոխման Առաջարկի շուրջ բանակցությունների,

որոնք չեն կարող 1 (մեկ) ամսից երկար տևել: Սույն կետով նախատեսված բանակցությունների արդյունքում համաձայնության գալու դեպքում Կողմերը գրավոր եղանակով կնքում են Ծրագրի փոփոխման վերաբերյալ համաձայնագիր, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվում է նաև Որոշման փոփոխությունը և դրան(ց)ով նախատեսված պայմաններով, կարգով ու ժամկետներում կատարում են Ծրագրի փոփոխություններ ու ձևափոխումներ:

12.7. Այն դեպքում, երբ Կառավարությունը մեկամսյա ժամկետում չի քննարկում Փոփոխման Առաջարկն ու Ռենշինին գրավոր չի ներկայացնում իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը կամ Ռենշինին է ներկայացնում Փոփոխման Առաջարկի վերաբերյալ իր անհամաձայնությունը կամ Ռենշինին չի հրավիրում Փոփոխման Առաջարկի շուրջ բանակցությունների (սույն Համաձայնագրի 12.5-րդ կետով նախատեսված դեպքում) կամ սույն Բաժնով նախատեսված ժամկետում Կողմերը չեն կնքում Ծրագրի փոփոխման վերաբերյալ համաձայնագիր կամ Փոփոխման առաջարկ ներկայացնելը հանգամանքների բերմամբ իրատեսական չէ, ապա Ռենշինն իր բացարձակ հայեցողությամբ իրավասու է Կառավարությանն ուղարկել Վաճառքի Օպցիոնի իր պահանջը, բացառությամբ սույն Համաձայնագրի 12.4-րդ կետով նախատեսված դեպքի կամ սույն Համաձայնագրով նախատեսված այլ դեպքերի:

12.8. Այն դեպքում, երբ տեղի են ունենում սույն Բաժնով նախատեսված Բացասական Իրադարձություններից մեկը կամ մի քանիսը, որոնք չեն առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարության կամ վերջինիս անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության հետևանքով (մասնավորապես՝ սույն Համաձայնագրի 12.1.3-րդ ենթակետով), ապա Ռենշինը Կառավարությանն է ներկայացնում Փոփոխման Առաջարկ: Ընդ որում, Ռենշինն ու Կառավարությունը պայմանավորվում են, որ սույն կետում նշված պարագայում Փոփոխման Առաջարկ ներկայացնելու դեպքում գործում են սույն Համաձայնագրի 12.7-րդ և 12.9-րդ կետերում նշված կարգավորումները:

12.9. Այն դեպքում, երբ ներկայացված Փոփոխման Առաջարկի վերաբերյալ Կառավարությունը և Ռենշինը սահմանված ժամկետում համաձայնության չեն գալիս, և, եթե Փոփոխման Առաջարկի հիմք հանդիսացող Բացասական Իրադարձությունը հետևանք չէ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ վերջինիս անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության, ինչպես նաև սույն Համաձայնագրի 12.10-րդ կետով նախատեսված դեպքերում, Ռենշինը և Կառավարությունը ներգրավում են 5 (հինգ) հոգուց բաղկացած փորձագիտական խումբ՝ Փոփոխման Առաջարկի վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով: Խմբից Ռենշինը և Կառավարությունը՝ յուրաքանչյուրը նշանակում է երկուական անկախ անդամի, և միասին՝ 1 (մեկ) անկախ անդամի: Փորձագիտական խումբը եզրակացություն տալու համար հաշվի է առնում Փոփոխման Առաջարկի իրագործելիությունը և այդ պարագայում Փոփոխման Առաջարկով ներկայացված ծրագրի հնարավոր լավագույն տնտեսական ազդեցություն ունենալու հանգամանքը: Փորձագիտական խումբը Փոփոխման Առաջարկի վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրում է ձայների 4/5 մեծամասնությամբ: Փորձագիտական խմբի եզրակացությունը պարտադիր է Կողմերի համար և ենթակա չէ բողոքարկման «ըստ էության»՝ բովանդակային հիմունքներով: Փորձագիտական խմբի վարձատրությունն իրականացվում է Ընկերության հաշվին:

12.10. Սույն Համաձայնագրի 12.1.4-րդ ենթակետով սահմանված Բացասական Իրադարձության ի հայտ գալու դեպքում Ռենշինը և Կառավարությունը պայմանավորվում են, որ այդ պարագայում

Ռենշինը ներկայացնում է Փոփոխման Առաջարկ, և գործում են սույն Համաձայնագրի 12.6-րդ և 12.9-րդ կետերում նշված կարգավորումները:

XIII. ՎԱՃԱՌՔԻ ՕՊՑԻՈՆ

13.1. Սույն Համաձայնագրի 12.4-րդ կետին համապատասխան Վաճառքի Օպցիոնը Ռենշինին վերապահում է իրավունք, բայց ոչ պարտականություն, Կառավարությանը վաճառել իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերը, իսկ Կառավարությանն էլ պարտավորեցնում է սույն Բաժին XIII-ով սահմանված կանոններով որոշվող վաճառքի գնով (այսուհետ՝ Վաճառքի Գին) Ռենշինից գնել այդ բաժնետոմսերը:

13.2. Կառավարությունն ու Ռենշինը պայմանավորվում են, որ այն դեպքում, երբ տեղի են ունենում Բաժին XII-ով նախատեսված Բացասական Իրադարձություններից մեկը կամ մի քանիսը, որոնք առաջացել են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ վերջինիս անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության հետևանքով (մասնավորապես՝ սույն Համաձայնագրի 12.1.1-րդ և 12.1.2-րդ ենթակետերով), ապա սույն Համաձայնագրի 13.1-րդ կետով նախատեսված Վաճառքի Գինը կազմում է մինչև Վաճառքի Օպցիոնի իրականացման պահանջը Կառավարությանն ուղարկելը Ռենշինի կողմից Ընկերությունում հիմնադրման պահին տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց փաստացի վճարված/ներդրված, ինչպես նաև՝ Հայփոստի բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վերջինիս վճարված դրամական միջոցների ու այլ գույքի արժեքը բազմապատկած 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) գործակցով:

13.3. Կառավարությունն ու Ռենշինը պայմանավորվում են նաև, որ այն դեպքում, երբ տեղի են ունենում Բաժին XII-ով նախատեսված Բացասական Իրադարձություններից մեկը կամ մի քանիսը, որոնք չեն առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարության կամ վերջինիս անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության հետևանքով (մասնավորապես՝ սույն Համաձայնագրի 12.1.3-րդ ենթակետով), ապա սույն Բաժնի 13.1-ին կետով նախատեսված Վաճառքի Գինը կազմում է մինչև Վաճառքի Օպցիոնի իրականացման պահանջը Կառավարությանն ուղարկելը Ռենշինի կողմից Ընկերությունում հիմնադրման պահին տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց փաստացի վճարված/ներդրված, ինչպես նաև՝ Հայփոստի բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վերջինիս վճարված դրամական միջոցների ու այլ գույքի արժեքը բազմապատկած 1.1 (մեկ ամբողջ մեկ տասնորդական) գործակցով:

13.4. Վաճառքի Օպցիոնի իրականացման պահանջը Կառավարությանն ուղարկելու հետ մեկտեղ Ռենշինը պարտավոր է դրան կից Կառավարությանն ուղարկել իր ներդրումները/վճարումը հավաստող գրավոր ապացույցները (փաստաթղթերի պատճենները):

13.5. Վաճառքի Օպցիոնի իրականացման պահանջը (ներառյալ՝ ներդրումները/վճարումը հավաստող գրավոր ապացույցները) ստանալու պահից Կառավարությունը սույն Բաժնով նախատեսված կարգով պարտավորվում է համապատասխան Վաճառքի Գնով Ռենշինից գնել նրան պատկանող Ընկերության բաժնետոմսերը:

13.6. Սույն Բաժնով և Բաժին XII-ով նախատեսված դեպքում Վաճառքի Օպցիոնի իրավունքն իրականացնելու համար Ռենշինը պարտավոր է սույն Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգին համապատասխան այդ մասին գրավոր պահանջ ներկայացնել Կառավարությանը (այսուհետ՝ Վաճառքի Օպցիոնի Ծանուցում)՝ նշելով այն Բացասական Իրադարձություն(ներ)ը, որը (որոնք) ըստ Ռենշինի հիմք է (են) հանդիսացել Վաճառքի Օպցիոնի իրավունքի իրականացման համար: Կառավարությունը, ստանալով Վաճառքի Օպցիոնի Ծանուցումը, պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում (եթե այլ ժամկետ չի համաձայնեցվել Կառավարության և Ռենշինի միջև) վճարել Վաճառքի Գինը՝ այն փոխանցելով բանկային հատուկ հաշվին (օրինակ՝ էսքրոու հաշիվ), և այդ մասին համապատասխան կարգով ծանուցել Ռենշինին: Վաճառքի Գինը Ռենշինի բանկային հատուկ հաշվին (օրինակ՝ էսքրոու հաշիվ) դեպոնացված լինելու մասին ծանուցումը ստանալուց հետո Ռենշինը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան արժեթղթերի հաշվի օպերատորի միջոցով Ընկերությունում իրեն սեփականության իրավունքով պատկանող բոլոր բաժնետոմսերը Կառավարությանը փոխանցելու հանձնարարական տալ, որը, սույն Համաձայնագրի հետ միասին, բավարար հիմք է հանդիսանում բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը Ռենշինից Կառավարությանը փոխանցելու համար: Կասկածից խուսափելու համար, Ռենշինը որևէ պարագայում պարտավոր չէ ներկայացնել նման հանձնարարական, քանի դեռ Կառավարությունը Վաճառքի Գինը չի դեպոնացրել համապատասխան հատուկ հաշվին և այդ մասին գրավոր կերպով չի տեղեկացրել Ռենշինին: Սույն կետով նշված ժամկետում Կառավարության կողմից Վաճառքի Գինը բանկային հատուկ հաշվին չփոխանցելու դեպքում Ռենշինի պահանջով կիրառվում է (Կառավարության կողմից Ռենշինին է վճարվում), իսկ Ռենշինի կողմից բաժնետոմսերի փոխանցումը չիրականացնելու դեպքում՝ Կառավարության պահանջով կիրառվում է (Ռենշինի կողմից Կառավարությանն է վճարվում) տույժ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Վաճառքի Գնի 0.06 (զրո ամբողջ վեց հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան Վաճառքի Գինը: Ընդ որում, Կողմերը համաձայնում են, որ Վաճառքի Օպցիոնի իրականացման հետ կապված Ռենշինից չի պահանջվի նման փոխանցման հետ կապված որևէ հավաստում ներկայացնել՝ բացառությամբ Ռենշինի կողմից փոխանցման ենթակա բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության հավաստման:

XIV. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ ԿԱՄ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄԸ

14.1. Բացառությամբ Հայփոստի, Ընկերության յուրաքանչյուր Բաժնետեր իրավասու է ի ապահովումն իր, Ընկերության կամ այլ երրորդ անձանց պարտավորությունների՝ գրավ դնելու, պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցով ծանրաբեռնելու իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերը, կամ այլ կերպ դրա նկատմամբ կիրառելու այլ սահմանափակում՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 14.2-րդ կետով սահմանված պահանջները: Ընդ որում, սույն կետով Ընկերության բաժնետոմսերի նկատմամբ կիրառված ապահովման միջոցի կամ այլ սահմանափակման կիրառման հետևանքով բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման պարագայում նոր սեփականատիրոջն են փոխանցվում միայն փոխանցման պահին տվյալ բաժնետոմսերի համար ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավունքները և պարտականությունները: Տվյալ փոխանցման հետևանքով վերջինս չի դառնում սույն Համաձայնագրի կողմ և սույն Համաձայնագիրն իր համար չի առաջացնում որևէ իրավունք կամ պարտականություն, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով և Կողմերի համաձայնությամբ:

14.2. Ընկերության կողմից Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի (կամ դրա մի մասի) գրավադրումը թույլատրվում է միայն Ժողովի հաստատմամբ՝ ի ապահովումն Ծրագրի ֆինանսավորման գործարք(ներ)ով Ընկերության պարտավորությունների, որի էական պայմանները ենթակա են Խորհրդի հաստատմանը Ընկերության Կանոնադրությամբ սահմանված կարգով: Ընդ որում, Խորհրդի որոշում կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե դրան կողմ է քվեարկել Կառավարության կողմից առաջադրված Խորհրդի անդամը: Մինչև սույն Համաձայնագրի Հավելված 2-ով սահմանված Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքի չափով ֆինանսավորման ամբողջական ներգրավումը Ռենշինին պատկանող Ընկերության թողարկած բաժնետոմսերի գրավադրումը թույլատրվում է միայն ի ապահովումն սույն կետում նշված՝ Ծրագրի ֆինանսավորման գործարք(ներ)ով Ընկերության պարտավորությունների: Համաձայնագրի Հավելված 2-ով սահմանված Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքի չափով (որը ներառում է նաև Ընկերության կանոնադրական կապիտալում կատարված/կատարվելիք բոլոր ներդրումները) ամբողջական ֆինանսավորման ներգրավումից հետո Ռենշինն ազատ է իր հայեցողությամբ օգտագործել իրեն պատկանող Ընկերության թողարկած և չգրավադրված բաժնետոմսերը որպես միջոց (այդ թվում՝ որպես գրավ) իր կամ ցանկացած երրորդ անձի ցանկացած նպատակով ներգրավված ֆինանսավորումների/պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

14.3. Հայփոստն իրավասու չէ ի ապահովումն իր, Ընկերության կամ այլ երրորդ անձանց պարտավորությունների՝ գրավ դնել, պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցով ծանրաբեռնել իրեն պատկանող Ընկերության բաժնետոմսերը կամ դրանց նկատմամբ իրավունքները, կամ այլ կերպ դրա նկատմամբ կիրառել այլ սահմանափակում կամ երրորդ անձանց փոխանցել դրանք առանց Ռենշինի նախնական գրավոր համաձայնության:

XV. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

15.1. Կողմերը համաձայնում են, որ Ընկերության գրանցման պահից 6 (վեց) ամսվա ընթացքում (բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան Շենքի քանդման աշխատանքները սկսելու պահը) և պայմանով, որ Ընկերության կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է, Ընկերությանը (որպես լիցենզառու կամ ենթալիցենզառու) պետք է փոխանցվի 2021 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված լիցենզային պայմանագրով կամ առնվազն նույն ծավալով և բովանդակությամբ կնքված նոր լիցենզային պայմանագրով կամ դրա(նց) հիման վրա կնքված ենթալիցենզային պայմանագրով (այուհետ՝ Լիցենզիա) սահմանված բոլոր իրավունքները, որի հիման վրա Ընկերությունը կօգտագործի Լիցենզիայով սահմանված Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center) ապրանքային նշան(ներ)ը: Ընդ որում, Լիցենզիայից բխող Ընկերության բոլոր իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնում՝ սույն կետով սահմանված նույն ժամկետում և պայմաններում:

15.2. Ընկերությունը պարտավորվում է հետևել Լիցենզիայի պահանջներին, իսկ Բաժնետերերը պարտավորվում են ներդնել իրենց լավագույն ողջամիտ ջանքերը, որպես Ընկերության բաժնետեր իրենց իրավասության սահմաններում վերահսկողություն իրականացնել ապրանքային նշանի պատշաճ, օրինական ու իրավատիրոջ պահանջների պահպանմամբ օգտագործման նկատմամբ ու, ի թիվս այլոց, թույլ չտալ Ընկերության կամ որևէ երրորդ անձի գործողությունների կամ անգործության հետևանքով ապրանքային նշանի ապօրինի կամ անպատշաճ կամ իրավատիրոջ պահանջների չպահպանմամբ օգտագործումը:

XVI. ԾՐԱԳՐԻ ՁԱԽՈՂՈՒՄՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

16.1. Հաշվի առնելով Ծրագրի ժամանակին ու լիարժեք իրականացման կարևորությունը, և այն, որ Ընկերության օպերացիոն կառավարման լիազորություններն ու իրավասությունները պատկանում են Ռենշինին՝ Կողմերը ստորև առանձնացնում են Ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր խնդիրները (այսուհետ՝ Ծրագրի Ձախողումներ), որոնք կարող են ի հայտ գալ Ծրագրի իրականացման ընթացքում, և որոնց համար սույն Համաձայնագրով սահմանվում են որոշակի հետևանքներ.

16.1.1. Ծրագրի իրականացման որևէ միջանկյալ ժամկետի կետանց ավելի քան 12 (տասներկու) ամսով, կամ Ծրագրի վերջնաժամկետի, որը սահմանված է սույն Համաձայնագրի Հավելված 2-ով, կետանց ավելի քան 36 (երեսունվեց) ամսով (որի մեջ չեն հաշվարկվում **(ա)** սույն Համաձայնագրի 12.1.1 ենթակետի (6)-րդ մասով սահմանված համապատասխան հողամասը պետության կարիքների համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթաց նախաձեռնելու կամ իրականացնելու ժամկետային երկարաձգումները և ուշացումները, որոնք հետևանք են համապատասխան հողամասի սեփականատիրոջ (սեփականատերերի) կամ նույն մասով սահմանված այլ շահագրգիռ անձի կողմից հանրային շահ ճանաչելու հարցով ներկայացված հայց(եր)ի, և/կամ **(բ)** սույն Համաձայնագրով սահմանված ժամկետների ուշացումները, որոնք հետևանք են պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնության, թույլտվության կամ այլ փաստաթղթի հաստատման կամ տրամադրման՝ սահմանված ժամկետում չտրամադրելու կամ մերժելու, բացառությամբ, եթե դրա պատճառ է Ընկերության (այդ թվում՝ Ընկերության կողմից ներգրավված երրորդ անձանց) թերացումը), եթե համապատասխանաբար Ծրագրի առանձին միջանկյալ փուլի կամ Ծրագրի վերջնական ավարտվածության աստիճանը 80 (ութսուն) տոկոսից պակաս է: Ընդ որում, 80 (ութսուն) տոկոս և ավել ավարտվածության դեպքում համապատասխան փուլի ժամկետը երկարացվում է ևս 25 (քսանհինգ) տոկոսով: Միևնույն ժամանակ, սույն ենթակետով սահմանված ձախողման դեպք չի համարվում, եթե մինչ սույն ենթակետով սահմանված ժամկետների վրա հասնելը Կառավարությունը և Ռենշինը համաձայնության են գալիս թույլատրելի այլ ժամկետների վերաբերյալ:

16.1.2. Համալիրի կառուցման շրջանակներում ՀՀ օրենսդրության պահանջների այնպիսի խախտում, որը սույն Համաձայնագրի ստորագրման պահի դրությամբ գործող ՀՀ օրենսդրության համաձայն հիմք է Համալիրի կառուցումը և/կամ շահագործումն արգելելու համար՝ սեյսմիկ անվտանգության, հրդեհային անվտանգության, տեխնիկական անվտանգության, անձանց կյանքի կամ առողջության պահպանությանն ուղղված պահանջներից ելնելով, կամ այնպիսի խախտում կամ որևէ այլ թերացում, որի արդյունքում առկա է Համալիրի կամ դրա որևէ մասի փլուզման վտանգ, մարդկանց կյանքին կամ առողջությանը վտանգ, Համալիրին հարակից անշարժ գույքերին էական վնաս հասցնելու վտանգ: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ձախողման դեպք չի համարվում, եթե Համալիրի կառուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված շինթույլտվությանը, ճարտարապետահատակագծային առաջադրանքին և դրանց հիմքում ընկած փաստաթղթերին (ներառյալ՝ ժամանակ առ ժամանակ դրանցում կատարված փոփոխություններին) համապատասխան:

16.1.3. Ծրագրի իրականացման ընթացքում կամ դրա ավարտից հետո մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը Լիցենզիայի դադարեցման հետևանքով կամ որևէ այլ կերպ Ընկերությունը կորցնում է Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC)) ապրանքային նշանն օգտագործելու իրավունքը, բացառությամբ եթե Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC)) ապրանքային նշանի Լիցենզիայի դադարեցումը հետևանք է Հայաստանի Հանրապետությունից այս բրենդի դուրս գալու որոշման (որը կապված չէ Ընկերության և/կամ Ռենշինի կողմից Լիցենզիայի որևէ պայմանի խախտման հետ): Ընդ որում, սույն կետի խախտում չի համարվում, եթե Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC)) ապրանքային նշանի Լիցենզիայի դադարելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, Ռենշինը կարողանում է նույն կարգի կամ ավելի բարձր կարգի համաշխարհային բրենդ ներկայացնել Ընկերության համար:

16.2. Ծրագրի Ձախողում չի համարվում այն իրավիճակը, որը հետևանք է պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների և/կամ անգործության, կամ անհաղթահարելի ուժի ազդեցության:

16.3. Ծրագրի Ձախողում առաջանալու դեպքում Կառավարությունն ունի Ռենշինին պատկանող Ընկերության բաժնետոմսերը գնելու օպցիոնի իրավունք (այսուհետ՝ Գնման Օպցիոն):

16.4. Այն դեպքում, երբ տեղի են ունենում սույն Բաժնով նախատեսված Ծրագրի Ձախողումներից մեկը կամ մի քանիսը, ապա մինչև Գնման Օպցիոնի կիրառումը, Ռենշինը Կառավարությանը կարող է ներկայացնել Ծրագրի փոփոխման կամ ձևափոխման առաջարկ (այսուհետ՝ Ձևափոխման Առաջարկ), եթե համապատասխան փոփոխությունն օբյեկտիվորեն հնարավոր է:

16.5. Կառավարությունը պարտավոր է Ձևափոխման Առաջարկը քննարկել մեկամսյա ժամկետում ու Ռենշինին ներկայացնել Ձևափոխման Առաջարկի վերաբերյալ իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Կառավարությունն իրավասու է նաև սույն կետով նախատեսված մեկամսյա ժամկետում Ռենշինին հրավիրել Ձևափոխման Առաջարկի շուրջ բանակցությունների, որոնք չեն կարող մեկ ամսից երկար տևել: Սույն կետով նախատեսված բանակցությունների արդյունքում համաձայնության գալու դեպքում Կողմերը գրավոր եղանակով կնքում են Ծրագրի փոփոխման վերաբերյալ համաձայնագիր, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվում է նաև Որոշման փոփոխությունը և դրան(ց)ով նախատեսված պայմաններով, կարգով ու ժամկետներում կատարվում են Ծրագրի փոփոխություններ ու ձևափոխումներ:

16.6. Այն դեպքում, երբ մեկամսյա ժամկետում Կառավարությունն ու Ռենշինը համաձայնության չեն գալիս Ձևափոխման Առաջարկի շուրջ, ապա Ռենշինը և Կառավարությունը ներգրավում են 5 (հինգ) հոգուց բաղկացած փորձագիտական խումբ՝ Ձևափոխման Առաջարկի վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով: Խմբից Ռենշինը և Կառավարությունը՝ յուրաքանչյուրը նշանակում է երկուական անկախ անդամի, և միասին՝ 1 (մեկ) անկախ անդամի: Փորձագիտական խումբը եզրակացություն տալու համար հաշվի է առնում Ձևափոխման Առաջարկի իրագործելիությունը և այդ պարագայում Ձևափոխման Առաջարկով ներկայացված ծրագրի հնարավոր լավագույն տնտեսական ազդեցություն ունենալու հանգամանքը: Փորձագիտական խումբը Ձևափոխման Առաջարկի վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրում է ձայների 4/5 մեծամասնությամբ: Փորձագիտական խմբի եզրակացությունը պարտադիր է Կողմերի համար

և ենթակա չէ բողոքարկման «ըստ էության»՝ բովանդակային հիմունքներով: Փորձագիտական խմբի վարձատրությունն իրականացվում է Ընկերության հաշվին:

16.7. Եթե Գնման Օպցիոնի ներկայացման հիմքերի ի հայտ գալու պահից մեկամսյա ժամկետում Ձևափոխման Առաջարկ չի ներկայացվել, եթե հնարավոր է այդպիսի առաջարկ ներկայացնելը, ապա Կառավարությունն իր բացարձակ հայեցողությամբ իրավասու է Ռենշինին ուղարկել Գնման Օպցիոնի ծանուցում:

XVII. ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆ

17.1. Սույն Համաձայնագրի 16.3-րդ կետին համապատասխան Գնման Օպցիոնը Կառավարությանը վերապահում է իրավունք, բայց ոչ պարտականություն, Ռենշինից գնել վերջինին պատկանող Ընկերության բաժնետոմսերը, իսկ Ռենշինին էլ պարտավորեցնում է ստորև սահմանված կանոններով որոշվող գնման գնով (այսուհետ՝ Գնման Գին) Կառավարությանը վաճառել այդ բաժնետոմսերը:

17.2. Կառավարությունն ու Ռենշինը պայմանավորվում են, որ այն դեպքում, երբ տեղի են ունենում սույն Համաձայնագրի 16.1.1-ից 16.1.3-րդ ենթակետերով նախատեսված Ծրագրի Ձախողումներից մեկը կամ մի քանիսը, որոնք առաջացել են Ռենշինի կամ իր կողմից առաջադրված՝ Խորհրդի անդամ(ներ)ի կամ Ընկերության Գլխավոր տնօրենի/Տնօրինության կամ նրանց անմիջական հսկողության տակ գտնվող անձանց և/կամ մարմինների գործողությունների և/կամ անգործության հետևանքով, ապա սույն Համաձայնագրի 17.1-րդ կետով նախատեսված Գնման Գինը կազմում է մինչև Գնման Օպցիոնի իրականացման պահանջը Ռենշինին ուղարկելը Ռենշինի կողմից Ընկերությունում հիմնադրման պահին տեղաբաշխած բաժնետոմսերի դիմաց փաստացի վճարված/ներդրված դրամական միջոցների ու այլ գույքի արժեքը բազմապատկած 0.8 (զրո ամբողջ ութ տասնորդական) գործակցով:

17.3. Գնման Օպցիոնի իրականացման պահանջը ստանալու պահից սույն Բաժնով սահմանված կարգով Ռենշինը պարտավորվում է համապատասխան Գնման Գնով Կառավարությանը վաճառել Ռենշինին պատկանող Ընկերության բաժնետոմսերը:

17.4. Բաժին XVI-ով և սույն Բաժնով սահմանված դեպքում, Գնման Օպցիոնի իրավունքն իրականացնելու համար Կառավարությունը պարտավոր է սույն Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգին համապատասխան այդ մասին գրավոր պահանջ ներկայացնել Ռենշինին (այսուհետ՝ Գնման Օպցիոնի Ծանուցում)՝ նշելով այն Ձախողման դեպքի մասին, որն ըստ Կառավարության հիմք է հանդիսացել Գնման Օպցիոնի իրականացման համար: Բացի այդ, Կառավարությունը պարտավոր է մինչև Գնման Օպցիոնի Ծանուցում ներկայացնելը՝ սույն Բաժնով նախատեսված համապատասխան Գնման Գինը դեպոնացնել բանկային հատուկ հաշվին (օրինակ՝ էսքրոու հաշիվ) և այդ մասին (բանկի, բանկային հաշվի և այլնի) տեղեկատվությունը ներառել Գնման Օպցիոնի Ծանուցման մեջ: Ռենշինը, ստանալով Գնման Օպցիոնի Ծանուցումը, պարտավոր է Գնման Օպցիոնի Ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան արժեթղթերի հաշվի օպերատորի միջոցով Ընկերությունում իրեն սեփականության իրավունքով պատկանող բոլոր բաժնետոմսերը Կառավարությանը փոխանցելու հանձնարարական տալ (որը, սույն Համաձայնագրի հետ միասին, բավարար հիմք է հանդիսանում բաժնետոմսերի նկատմամբ սեփականության

իրավունքը Ռենշինից Կառավարությանը փոխանցելու համար): Կասկածից խուսափելու համար, Ռենշինը որևէ պարագայում պարտավոր չէ ներկայացնել նման հանձնարարական, քանի դեռ Կառավարությունը Գնման Գինը չի դեպոնացրել համապատասխան հատուկ հաշվին և այդ մասին տեղեկատվություն տրամադրել Ռենշինին Գնման Օպցիոնի Ծանուցմամբ: Ծանուցումը ստանալուց հետո սույն կետով նշված ժամկետում բաժնետոմսերի փոխանցումը չիրականացնելու դեպքում Կառավարության պահանջով կիրառվում է (Ռենշինի կողմից Կառավարությանն է վճարվում) տույժ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Գնման Գնի 0.06 (զրո ամբողջ վեց հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան Գնման Գինը: Ընդ որում, Կողմերը համաձայնում են, որ Գնման Օպցիոնի իրականացման հետ կապված Ռենշինից չի պահանջվի նման փոխանցման հետ կապված որևէ հավաստում ներկայացնել՝ բացառությամբ Ռենշինի կողմից փոխանցման ենթակա բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության հավաստման:

XVIII. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18.1. Պայմանով, որ Ռենշինի կողմից չեն խախտվել Ծրագրի իրականացման ժամկետները (ներառյալ՝ սույն Համաձայնագրով թույլատրելի շեղումները), Կառավարությունն իր իրավասությունների սահմաններում, քանի դեռ Ընկերության բաժնետեր է, իսկ այդպիսին դադարելու դեպքում՝ մինչև Ծրագրի ավարտը, եթե այն ավելի ուշ է տեղի ունեցել, պետք է.

18.1.1. Ձեռնպահ մնա Ընկերության Գույքը երբևէ գերակա շահ ճանաչելուց.

18.1.2. Ձեռնպահ մնա անմիջապես Ընկերությանը և/կամ Ծրագրի իրականացումը թիրախավորող ու համապատասխանաբար Ընկերության կամ Ռենշինի վիճակը վատթարացնող օրենսդրական փոփոխությունների ընդունումից, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների ընդունումից, որոնց ուժով անհնարին է դառնում Ծրագրի իրականացումը կամ անհրաժեշտ է դառնում դրա զգալի փոփոխությունը, իսկ եթե նման օրենսդրական փոփոխություններ առաջարկվել են այլ անձանց կողմից, ապա ներկայացնի իր բացասական եզրակացությունն ու իր իրավասության սահմաններում ջանա դադարեցնել նման օրենսդրական փոփոխությունների ընդունումը.

18.1.3. Մինչև Ռենշինի կողմից Հայփոստին պատկանող բաժնետոմսերի ամբողջական ձեռքբերումը չօտարի Հայփոստում ունեցած իր բաժնեմասնակցությունը կամ այլ կերպ այլ անձի չփոխանցի դրա նկատմամբ իրավունքները, քանի դեռ գնորդը Ռենշինի համար ողջամիտ չափով չստանձնի պարտավորություն ապահովել սույն Համաձայնագրով Հայփոստի ստանձնած պարտավորությունների կատարումը:

18.1.4. Առանց Ռենշինի նախնական գրավոր համաձայնության չփոփոխի և/կամ չլրացնի Որոշումը կամ Ծրագիրը: Սույն ենթակետը չի վերաբերում Որոշման այնպիսի փոփոխություններին, որոնք բացասական ազդեցություն չեն թողնում Ծրագրի իրականացման և/կամ Ռենշինի իրավունքների և/կամ շահերի վրա:

18.2. Կառավարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակում պարտավորվում է ձեռնարկել միջոցներ ապահովելու [***]-ի կողմից Հավելված 3-ում ներկայացված ձևով Ծրագրի աջակցման նամակի տրամադրումը, որը Ընկերության և/կամ Ռենշինի կողմից կօգտագործվի բացառապես Ծրագրի իրագործման նպատակով:

18.3. Սույն Բաժնով սահմանված պարտավորությունները չկատարելը հանդիսանում է Բացասական Իրադարձություն և հիմք է առաջացնում Ռենշինի կողմից սույն Համաձայնագրի Բաժին XII-ով ու Բաժին XIII-ով նախատեսված իր իրավունքներն իրականացնելու համար:

XIX. ՆՈՐ ԲԱԺՆԵՏԵՐ

19.1. Այն դեպքում, երբ Ընկերությունում ներգրավվում է նոր բաժնետեր Բաժնետերերից որևէ մեկի կողմից իր բաժնետոմսերը սույն Համաձայնագրով նախատեսված կարգով օտարելու կամ Ընկերության նոր բաժնետոմսեր թողարկելու հիման վրա, ապա նման բաժնետիրոջը չի կարող փոխանցվել Ընկերության որևէ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունք, քանի դեռ նա չի միացել սույն Համաձայնագրին ամբողջությամբ (ստորագրել սույն Համաձայնագրին կցված ձևով միանալու մասին համաձայնագիր)՝ իր վրա ստանձնելով նույն իրավունքներն ու պարտականությունները (իր կողմից ձեռք բերված բաժնետոմսերին համամասնորեն), որոնք կրել է այն Կողմը, ումից նա ձեռք է բերում իր բաժնետոմսերը, բացառությամբ, եթե սույն Համաձայնագրով այլ բան է նախատեսված: Նոր թողարկվող բաժնետոմսերի դեպքում սույն Համաձայնագրի Բաժին XII-ով, Բաժին XIII-ով, Բաժին XVI-ով, Բաժին XVII-ով նախատեսված կարգավորումները չեն կիրառվում այդպիսի բաժնետոմսերը ձեռք բերած բաժնետիրոջ նկատմամբ, իսկ այլ դրույթների մասով նա ձեռք է բերում նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ Ռենշինը:

19.2. Սույն Համաձայնագրի 19.1-րդ կետում նշված՝ միանալու մասին համաձայնագիր ստորագրելու պայմանը չի գործում, եթե բաժնետոմսերի փոխանցումը տեղի է ունեցել սույն Համաձայնագրի Բաժին XXVI-ով նախատեսված իրավահաջորդության հիման վրա, ինչի դեպքում իրավահաջորդն առանց որևէ լրացուցիչ գործողության համարվում է միացած սույն Համաձայնագրին և սույն Համաձայնագրի կողմ:

XX. ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20.1. Կողմերը սույնով համաձայնում են, որ Ծրագրի ավարտից հետո առնվազն մինչև Լիցենզիայի օգտագործման ժամկետի ավարտը Համալիրը պետք է շահագործվի որպես «Համաշխարհային առևտրի կենտրոն» (World Trade Center (WTC)), բացառությամբ սույն Համաձայնագրին համապատասխան Ծրագրում կատարված փոփոխություններով նախատեսված դեպքերի:

20.2. Կողմերը սույնով համաձայնում են, որ սույն Համաձայնագրի 20.1-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո Ռենշինն (Ընկերությունն) իրավասու է իր սեփական բացարձակ հայեցողությամբ որոշել Համալիրի շահագործման նշանակությունը՝ հաշվի առնելով Համալիրի շահագործման շահութաբերությունը և նպատակահարմարությունը:

XXI. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

21.1. Բաժնետերերը (նրանցից յուրաքանչյուրը) պարտավոր են պահպանել և չհրապարակել մյուս Կողմից (Բաժնետերերից կամ Ընկերությունից) ստացված տեղեկատվության գաղտնիությունը: Սույն Համաձայնագրի իմաստով գաղտնի տեղեկատվությունը (այսուհետ՝ Գաղտնի Տեղեկատվություն) ներառում է՝

21.1.1. Ընկերության և նրա հետ փոխկապակցված անձանց («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով) անցյալ, ներկա և ապագա բիզնեսի, ֆինանսական և մարքեթինգային գործունեության, ռազմավարության և գործողությունների, անձնական տվյալների, հաճախորդների և մատակարարների (ծառայություններ մատուցողների, աշխատանքներ կատարողների) վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, Ընկերության ֆինանսական և հարկային հաշվետվությունները, դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները, ներքին հաշվառման մատյանները, հաշվետվությունները և ռեգիստրները, ինչպես նաև դրանցում արտացոլված ցանկացած տեղեկատվություն,

21.1.2. Ընկերության գործընկերների կամ այլ աշխատակիցների կողմից Ընկերությանը ներկայացված կամ Ընկերության համար կամ վերջինիս պատվերով պատրաստված հետազոտական աշխատանքներ, գործարար ծրագրեր և դրանց համարժեք այլ փաստաթղթեր,

21.1.3. առանց որևէ սահմանափակման, առկա կամ ապագայում ձեռք բերվելիք ցանկացած տեխնիկական, առևտրային, գիտական տեղեկատվություն, ֆինանսական տվյալ և բանաձևեր, առևտրային գաղտնիք (ներառյալ՝ նոու-հաու), մեխանիզմ, գործընթացներ, գծանկարներ, նմուշներ, տեխնիկական նկարագրություններ, Ընկերության հաճախորդների ցուցակը և ցանկացած ձևով արտահայտված տեղեկատվություն, որը մյուս Կողմից ձեռք է բերվել Համաձայնագրի կատարման հետ կապված:

21.1.4. Ընկերության ստեղծման մասին պայմանագիրը (այսուհետ՝ Հիմնադրման Պայմանագիր), Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերը, Ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին իրավական ակտերն ու այլ փաստաթղթերը, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները, պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունները, Ժողովների, Խորհրդի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) (առկայության դեպքում), Տնօրինության նիստերի արձանագրությունները, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները, Ընկերության բաժնետերերի ցուցակները, Ընկերության կնքած պայմանագրերը:

21.2. Համաձայնագրի իմաստով Գաղտնի Տեղեկատվության հրապարակում է համարվում Բաժնետերերի (նրանցից յուրաքանչյուրի) ցանկացած գործողություն կամ անգործություն, որի արդյունքում Գաղտնի Տեղեկատվությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած հնարավոր ձևով գրավոր և/կամ բանավոր եղանակով հայտնի է դառնում երրորդ անձանց՝ առանց Ընկերության և/կամ Բաժնետերերի նախնական գրավոր համաձայնության, այդ թվում, բայց ոչ միայն՝

21.2.1. Գաղտնի Տեղեկատվության՝ բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակումը կամ տարածումը,

21.2.2. երրորդ անձին (անձանց) (այդ թվում՝ պետական մարմնի (ներառյալ՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի)) հայտնի կամ հասանելի դարձնելը, տրամադրելը, բացահայտելը,

21.2.3. երրորդ անձին (անձանց) (այդ թվում՝ պետական մարմնի (ներառյալ՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի)) Գաղտնի Տեղեկատվություն հայտնաբերելու, հայթայթելու կամ

ձեռք բերելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

21.3. Համաձայնագրի իմաստով Գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը (որի).

21.3.1. բացահայտումը կամ օգտագործումը պահանջվում է համապատասխան օրենքով.

21.3.2. բացահայտումը կամ օգտագործումը պահանջվում է սույն Համաձայնագրից բխող որևէ դատական վարույթում կամ նպատակով.

21.3.3. բացահայտումը կամ օգտագործումը պահանջվում է որևէ կարգավորող մարմնի կողմից, որին ենթակա է Կողմերից մեկը.

21.3.4. բացահայտումը կամ օգտագործումը պահանջվում է արժեթղթերի որևէ բորսայի կողմից, որում ցուցակված կամ վաճառվում են բացահայտող կողմի կամ նրա հոլդինգային ընկերության բաժնետոմսերը կամ այլ արժեթղթերը.

21.3.5. բացահայտումը կատարվում է որևէ հարկային մարմնի կողմից, և որը կապված է բացահայտող կողմի հարկային գործերի հետ.

21.3.6. բացահայտումը կատարվում է խիստ գաղտնի հիմունքներով բացահայտող կողմի պրոֆեսիոնալ խորհրդատուների, իրավախորհրդատուների, աուդիտորների և/կամ բանկիրների համար.

21.3.7. հանրությանը հասանելի է դարձել առանց բացահայտող կողմի մեղքի.

21.3.8. բացահայտող կողմի կողմից բացահայտմանը կամ օգտագործմանը մյուս կողմը նախնական գրավոր հավանություն է տվել:

21.4. Կողմերը պայմանավորվում են նաև, որ մինչ Ծրագրի ավարտը Կառավարությունը և Հայփոստը Ռենշինի կամ Ընկերության հետ նախապես փոխհամաձայնեցնելու են Ծրագրի իրականացման, դրա ընթացքի, մարտահրավերների կամ հաջողությունների մասին զանգվածային լրատվության միջոցներին, հանրությանը, ինչպես նաև սոցիալական ցանցերում տեղադրվող կամ կատարվող յուրաքանչյուր հայտարարություն (բացի այնպիսի հայտարարությունների, որոնք պարունակում են բացառապես առևտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկություններ): Կառավարությունը և Հայփոստն իրավասու չեն ի խախտումն սույն կետի, առանց Ռենշինի կամ Ընկերության հետ նախապես համաձայնեցնելու կատարել որևէ հայտարարություն կամ հրապարակել որևէ տեղեկատվություն:

21.5. Սույն Բաժնով սահմանված պարտավորությունները շարունակում են գործել անկախ Համաձայնագրի դադարած/լուծված լինելու հանգամանքից:

XXII. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

22.1. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ սույն Համաձայնագրին համապատասխան ներկայացված ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) ձևով և ստորագրված՝ ուղարկող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից սույն կետում նշված ֆիզիկական կամ էլեկտրոնային փոստի հասցեներով:

«Համաշխարհային Առևտրի Կենտրոն Երևան» ՓԲԸ	**Հայաստանի Հանրապետություն** Ում՝ Հայաստանի Հանրապետության

Ում՝ Գլխավոր Տնօրեն **[•]**-ին
Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան,
Բաղրամյան պողոտա 2-րդ փակուղի 8
շենք, 41 ոչ բնակելի տարածք
Հեռախոս՝ +374 **[•]**
Էլ.փոստ՝ **[•]**

էկոնոմիկայի նախարարությանը
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0010, Միեր
Մկրտչյան փող., 5 շենք
Հեռախոս՝ +374 **[•]**
Էլ.փոստ՝ **[•]**

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ
Ում՝ Գլխավոր գործադիր տնօրենին
Արայիկ Աբրահամյանին
Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան
փողոց, շենք 22
Հեռախոս՝ +374 **[•]**
Էլ.փոստ՝ **[•]**

«ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ
Ում՝ Գլխավոր տնօրեն Էդուարդ
Մարության
Հասցե՝ ՀՀ, Երևան, Կենտրոն, Փավստոս
Բուզանդի փողոց, 91, 72 տարածք, 0010
Հեռ՝ +374 11 900 100, +374 11 900 200
Էլ.փոստ՝ info@renshin.am
Eduard.marutyan@renshin.am

22.2. Ընդ որում, սույն Համաձայնագրի 22.1-րդ կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեները համարվում են պատշաճ ծանուցման հասցեներ, նման հասցեներին կատարված ծանուցումները համարվում են պատշաճ ծանուցումներ, ծանուցող Կողմը պարտավոր չէ ապացուցել, որ մյուս Կողմը փաստացի ստացել և/կամ կարդացել է ծանուցումը, թեև վեճի կամ տարաձայնության պարագայում պարտավոր է ապացուցել, որ փոխանակված էլեկտրոնային փոստի հասցեին իրականում ուղարկել է ծանուցումը, ծանուցումների մասին իրենց այս պայմանավորվածության նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 20.1 գլուխը, և դատարանը, արբիտրաժային տրիբունալը, ինչպես նաև պետական մարմինները կարող են Կողմի պահանջով Կողմերի միջև կնքված Համաձայնագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կիրառել Կողմերի միջև կնքված Համաձայնագրով սահմանված ծանուցման կարգը:

22.3. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է սույն Բաժնով սահմանված ծանուցման կարգով մյուս Կողմին տեղեկացնել իր և' էլեկտրոնային փոստի հասցեի և' ֆիզիկական հասցեի սույն Համաձայնագրում նշված փոփոխության և նոր հասցեի մասին: Հակառակ դեպքում համապատասխան հաղորդակցության և ծանուցման ուղարկումը Համաձայնագրում նշված իրենց համապատասխան հասցեին կհամարվի պատշաճ ծանուցում:

XXIII. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

23.1. Սույն Համաձայնագրով նախատեսված պարտականությունների և/կամ պարտավորությունների (այսուհետ՝ պարտավորություն) խախտման կամ չկատարման կամ անպատշաճ կատարման համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից այն դեպքում, երբ պարտավորությունների կատարումն անհնար է դարձել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (ֆորս-մաժոր), այն պայմանով, որ վերջինս անմիջականորեն ազդել է պարտավորությունների կատարման վրա, և Կողմը չէր կարող կանխատեսել կամ կանխել անհաղթահարելի ուժի ի հայտ գալը կամ դրա ազդեցությունը իր պարտավորությունների վրա:

23.2. Անհաղթահարելի ուժի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, ինչպես նաև արտակարգ ու անկանխելի այլ հանգամանքներ:

23.3. Կողմը, որի համար ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ, պետք է մյուս Կողմին գրավոր, իսկ եթե դա անհաղթահարելի ուժի ազդեցության պայմաններում հնարավոր չէ, ապա՝ բանավոր տեղեկացնի անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների մասին՝ բացատրելով անհաղթահարելի ուժի առկայության և ազդեցության մանրամասները: Այդ տեղեկացումը պետք է կատարվի անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պահից ողջամիտ ժամկետում:

23.4. Տեղեկացման մեջ պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների, դրանց ծագման ժամանակահատվածի, դրանց տևողության (եթե հնարավոր է կանխատեսել), այդպիսի հանգամանքների՝ պայմանագրային պարտավորությունների կատարման վրա ազդեցության և դրանով պայմանավորված այդպիսի պարտավորությունների խախտման (պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) վերաբերյալ: Սույն կետով նշված պարտականությունը չկատարելը զրկում է Կողմին այդ հանգամանքների ազդեցությամբ պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ չիրազեկելը կամ կետանցով իրազեկելը պայմանավորված է եղել հենց այդ հանգամանքներով:

23.5. Այն դեպքում, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 օրից ավելի, Կողմերը պարտավոր են բանակցել՝ Ծրագրի կատարման նոր ժամկետներ սահմանելու և/կամ Ծրագրում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

XXIV. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

24.1. Բաժնետերերից յուրաքանչյուրն առանձին-առանձին հավաստում և երաշխավորում է, որ.

24.1.1. լիովին և բավարար կերպով ծանոթ է սույն Համաձայնագրի դրույթներին, սույն Համաձայնագրին համապատասխան ստանձնած պարտավորություններին, կարող է ամբողջությամբ կնքել սույն Համաձայնագիրը և ունի բոլոր այն լիազորությունները, որոնք անհրաժեշտ են իր համար առաջացած պարտավորությունները կատարելու համար.

24.1.2. ստացել է արհեստավարժ իրավախորհրդատուի կարծիքն առ այն, որ սույն Համաձայնագրով նախատեսված պայմանավորվածություններն ու պարտականություններն օրինական են ու համապատասխանում են օրենքին, նորմատիվ այլ իրավական ակտերին ու իր ներքին իրավական ակտերին.

24.1.3. ճանաչում և ընդունում է սույն Համաձայնագրի իմաստը և հետևանքները և հաստատում է, որ դրանից բխող իրավական հետևանքները բխում են իր շահերից, և ստորագրել է այն բարի կամքի դրսևորմամբ.

24.1.4. Համաձայնագիրն արտահայտում է Բաժնետիրոջ օրինական, վավեր և վերջինիս պարտավորեցնող պարտականությունը, որը վերջինիս նկատմամբ կիրարկելի է դրանով սահմանված պայմաններին համապատասխան.

24.1.5. սույն Համաձայնագրի և դրա հետ կապված բոլոր փաստաթղթերի կնքումը և կատարումը չեն խախտում և չեն խախտի գործող օրենքի կամ նորմատիվ իրավական

այլ ակտի որևէ դրույթ, և չեն համարվի որևէ պայմանագրի կամ այլ համաձայնագրի կամ պարտավորության խախտում, որի կողմ է հանդիսանում համապատասխան Բաժնետերը, կամ որով սահմանափակված է Բաժնետերը կամ նրա գույքը.

24.1.6. ստացել է սույն Համաձայնագրի կնքման համար բոլոր անհրաժեշտ համաձայնություններն ու թույլտվությունները.

24.1.7. բարեխղճորեն կիրականացնի իր իրավունքները, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով և սահմանված են ՀՀ կիրառելի օրենսդրությամբ, ինչպես նաև ֆիդուցիար պարտավորությունների շրջանակներում կձեռնարկի իր լավագույն ջանքերը սույն Համաձայնագրով սահմանված պայմանների և կարգավորումների իրականացումը ապահովելու համար:

24.2. Ի լրումն վերոգրյալի՝ Ռենշինը, Հայփոստը և Ընկերությունն առանձին-առանձին հավաստում և երաշխավորում է նաև, որ.

24.2.1. Հայաստանի Հանրապետությունում պատշաճ կարգով գրանցված գործող կազմակերպություն է և ունի սեփականության իրավունք, որը նա ունի կամ կարող է ունենալ սույն Համաձայնագրի նպատակների համար և իրավասու է կատարել գործունեություն, որը նա իրականացնում է կամ կարող է իրականացնել սույն Համաձայնագրի նպատակների համար.

24.2.2. սույն Համաձայնագրի կնքման օրվա դրությամբ վճարունակ է և ընդգրկված չէ անվճարունակության, սնանկության, լուծարման կամ ինքնալուծարման գործընթացներում.

24.2.3. սույն Համաձայնագրի կնքումը և սույն պայմանների պահպանումը չի հանգեցնի իր Կանոնադրության կամ դրա նկատմամբ կիրառվող Օրենքի որևէ դրույթի խախտմանը:

24.3. Կառավարությունը հավաստում և երաշխավորում է, որ.

24.3.1. Անշարժ Գույք 1-ը սեփականության իրավունքով պատկանում է Կառավարությանը՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 03.03.2022թ.-ին տրված թիվ 03032022-01-0029 վկայականի.

24.3.2. սույն Համաձայնագրի կնքման պահին Անշարժ Գույք 1-ի ներդրման հետ կապված գործարքների (այն է՝ «[●]» [●]ի 2024թ. Ընկերության կանոնադրական կապիտալում անշարժ գույքի ներդրման պայմանագիր և «[●]» [●]ի 2024թ. «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության ստեղծման մասին պայմանագիր) կնքման և կատարման համար առկա չեն որևէ իրավական կամ այլ սահմանափակումներ կամ խոչընդոտներ, գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր, ինչպես նաև անհրաժեշտ չէ որևէ երրորդ անձի համաձայնության ստացում, Անշարժ Գույք 1-ի նկատմամբ առկա չեն որևէ անձի իրավունքներ, սահմանափակումներ, ծանրաբեռնումներ (ներառյալ՝ օգտագործման կամ վարձակալության իրավունք, գրավ, արգելանքներ և այլն), Անշարժ Գույք 1-ի գծով որևէ հարկային կամ այլ պարտավորություններ.

24.3.3. առկա չեն տեղեկություններ, պայմաններ, նորմատիվ ակտեր, սահմանափակումներ, երրորդ անձանց իրավունքներ, թաքնված թերություններ, որոնց մասին նա տեղյակ է կամ պետք է տեղյակ լինի մինչև Անշարժ Գույք 1-ի փոխանցումը, որոնք կարող են խոչընդոտել, սահմանափակել կամ անվավեր դարձնել սույն Համաձայնագիրը կամ Ընկերության պետական գրանցումը.

24.3.4. առկա չէ կամ նախկինում չի եղել որևէ դատավարություն, վարչական վարույթ կամ քննություն ցանկացած պետական մարմնի կողմից Անշարժ Գույք 1-ի նկատմամբ, որը

ներկայումս առկախված է կամ նախատեսվում է Անշարժ Գույք 1-ի նկատմամբ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի օրինականության կամ վավերականության կամ սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրականացման վրա:

24.4. Հայփոստը հավաստում և երաշխավորում է, որ.

24.4.1. Անշարժ Գույք 2-ը սեփականության իրավունքով պատկանում է Հայփոստին՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 15.12.2021թ.-ին տրված թիվ 15122021-01-0282 վկայականի.

24.4.2. սույն Համաձայնագրի կնքման պահին Անշարժ Գույք 2-ի ներդրման հետ կապված գործարքների (այն է՝ «[●]» [●]ի 2024թ. Ընկերության կանոնադրական կապիտալում անշարժ գույքի ներդրման պայմանագիր և «[●]» [●]ի 2024թ. «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերության ստեղծման մասին պայմանագիր) կնքման և կատարման համար առկա չեն որևէ իրավական կամ այլ սահմանափակումներ կամ խոչընդոտներ, գործարքները անվավեր ճանաչելու հիմքեր, ինչպես նաև անհրաժեշտ չէ որևէ երրորդ անձի համաձայնության ստացում, Անշարժ Գույք 2-ի նկատմամբ առկա չեն որևէ անձի իրավունքներ, սահմանափակումներ, ծանրաբեռնումներ (ներառյալ՝ օգտագործման կամ վարձակալության իրավունք, գրավ, արգելանքներ և այլն), Անշարժ Գույք 2-ի գծով որևէ հարկային կամ այլ պարտավորություններ.

24.4.3. առկա չեն տեղեկություններ, պայմաններ, նորմատիվ ակտեր, սահմանափակումներ, երրորդ անձանց իրավունքներ, թաքնված թերություններ, որոնց մասին նա տեղյակ է կամ պետք է տեղյակ լինի մինչև Անշարժ Գույք 2-ի փոխանցումը, որոնք կարող են խոչընդոտել, սահմանափակել կամ անվավեր դարձնել սույն Համաձայնագիրը կամ Ընկերության պետական գրանցումը.

24.4.4. առկա չէ կամ նախկինում չի եղել որևէ դատավարություն, վարչական վարույթ կամ քննություն ցանկացած պետական մարմնի կողմից Անշարժ Գույք 2-ի նկատմամբ, որը ներկայումս առկախված է կամ նախատեսվում է Անշարժ Գույք 2-ի նկատմամբ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի օրինականության կամ վավերականության կամ սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրականացման վրա:

24.5. Կողմերը հաստատում են, որ իրենց կողմից սույն Բաժնի ներքո տրված հավաստումները տրվել են սույն Համաձայնագրի կնքումը ապահովելու նպատակով, և որ մյուս Կողմը կնքել է սույն Համաձայնագիրը՝ այդպիսի հավաստումներից յուրաքանչյուրի վրա հիմնվելով և դրանց լիովին վստահելով:

24.6. Որևէ Կողմ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո չի կարող որևէ դատական, վարչական կամ այլ վարույթում կամ որևէ այլ կերպ վկայակոչել, որ սույն Բաժնում նշված իր հավաստիացումները կամ դրանցից գեթ մեկը սխալ կամ անարժանահավատ է:

24.7. Սույն Համաձայնագրի 24.3-րդ և/կամ 24.4-րդ կետերով սահմանված հավաստումներից որևէ մեկի խախտման դեպքում, որն Ընկերության և/կամ Ռենշինի համար առաջացնում է սույն Համաձայնագրի 12.1.2-րդ կամ 12.1.5-րդ ենթակետերից բացի այլ հետևանք, մասնավորապես՝ դրամական պարտավորություն և/կամ ցանկացած ծախս, որը հնարավոր չէ վիճարկել, կամ որի վիճարկման արդյունքում այն հաստատվել է ուժի մեջ մտած դատական ակտով (պայմանով, որ

համապատասխան վարույթի մասին Ընկերությունը և/կամ Ռենշինը հնարավորինս սեղմ ժամկետներում ծանուցել է Կառավարությանը), ապա Կառավարությունը պարտավորվում է համապատասխանաբար Ընկերությանը և/կամ Ռենշինին հատուցել կրած ծախսերը և/կամ կատարել համապատասխան դրամական պարտավորությունը:

XXV. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

25.1. Սույն Համաձայնագրի հիման վրա ծագող Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքների, դադարման, առոչինչ ճանաչվելու և դրա հետևանքների, Համաձայնագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման և այլ պարտականությունների նկատմամբ, ինչպես նաև սույն Համաձայնագրից բխող կամ դրա կապակցությամբ ծագած վեճերի կամ տարաձայնությունների կապակցությամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության օրենքները:

25.2. Սույն Համաձայնագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, որոնք կարող են նախաձեռնվել Կողմերից որևէ մեկի կողմից ու իրականացվել գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված որևէ եղանակով, եթե Կողմերն առանձին բանակցության անցկացման այլ կարգ կամ եղանակ չեն նախատեսել: Բանակցությունների առավելագույն ժամկետը 30 (երեսուն) օր է: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով ՀՀ դատարանների իրավասությունը, հանձնվելու է **Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Դատարանի** (ICC Arbitration Court) (այսուհետ՝ Արբիտրաժային դատարան) լուծմանը՝ Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան:

25.3. Կողմերը պայմանավորվում են, որ Կողմերի միջև որևէ վեճի լուծման արդյունքում վարույթի, այդ թվում՝ իրավաբանական ներկայացուցչության հետ կապված Կողմի կրած ծախսերը դրվում են պարտվող Կողմի վրա:

25.4. Սույնով Կողմերը հավաստիացնում են, որ ծանոթացել են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին:

25.5. Սույն արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի է ՀՀ օրենսդրությունը: Վեճերի քննությունն իրականացվում է ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան:

25.6. Կողմերը պայմանավորվում են, որ վեճերի լուծման համար ձևավորվում է եռակազմ արբիտրաժային տրիբունալ, որում ընդգրկված արբիտրներն ընտրվում (նշանակվում) են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան :

25.7. Կողմերը պայմանավորվում են, որ Արբիտրաժային տրիբունալի որոշումները ենթակա են պարտադիր կատարման ՀՀ-ի ու աշխարհի այլ երկրների տարածքում:

25.8. Արբիտրաժային դատավարության լեզուն անգլերենն է, արբիտրաժի վայրը՝ Բրյուսել, Բելգիա:

XXVI. ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ

26.1. Սույն Համաձայնագրի դրույթները պարտադիր են Կողմերի իրավահաջորդների համար՝ նույն կերպ, ինչպես սույն Համաձայնագիրը պարտադիր կլիներ տվյալ իրավանախորդ Կողմի համար:

26.2. Կողմի իրավահաջորդն այդպիսին դառնալու պահից համարվում է միացած սույն Համաձայնագրին առանց որևէ լրացուցիչ գործողության կամ փաստաթղթավորման:

26.3. Ռենշինի, Հայփոստի կամ Ընկերության վերակազմակերպման, ինչպես նաև Կառավարության լիազորված մարմնի փոփոխության դեպքում, իրավահաջորդին փոխանցվող Ընկերության բաժնետոմսերի փոխանցման ժամանակ մյուս Կողմերը չեն կարող օգտվել իրենց նախապատվության իրավունքից և պետք է սեղմ ժամկետում համաձայնություն տան այդ փոխանցման կապակցությամբ:

26.4. Ռենշինի, Հայփոստի կամ Ընկերության վերակազմակերպման կամ Կառավարության կողմից լիազորված մարմնի փոփոխության դեպքում համապատասխան Կողմը պարտավոր է մյուս Կողմերին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնել այդ մասին, եթե ՀՀ օրենսդրությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

XXVII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27.1. Ընկերության կանոնադրության բոլոր այն դրույթները, որոնք սահմանված են սույն Համաձայնագրի հիման վրա, կարող են լրացվել և/կամ փոփոխվել բացառապես սույն Համաձայնագրում համապատասխան լրացումը և/կամ փոփոխությունը պատշաճ կերպով ուժի մեջ մտնելուց հետո:

27.2. Ընկերության իրավասու մարմինը լիազորված չէ հաստատել Ընկերության կանոնադրության լրացումները և/կամ փոփոխությունները (նոր խմբագրությամբ կանոնադրությունը), որոնք հակասում են սույն Համաձայնագրի 27.1-րդ կետում նշված պահանջին:

XXVIII. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28.1. Սույն Համաձայնագիրը կարող է լրացվել և/կամ փոփոխվել Կողմերի պատշաճ կերպով լիազորված անձանց կողմից ստորագրվելով՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով՝ բացառությամբ սույն Համաձայնագրի Բաժին VIIII-ով նախատեսված դեպքի:

XXIX. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

29.1. Բաժնետերերից որևէ մեկը իրավասու չէ օտարել, զիջել կամ այլ կերպ փոխանցել սույն Համաձայնագրից բխող իր իրավունքները, շահերը և/կամ պարտավորությունները առանց մյուս Բաժնետերերի նախնական գրավոր համաձայնության, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:

29.2. Կողմերը սույնով ընդունում են, որ Ռենշինն իրավասու է զիջել կամ այլ կերպ փոխանցել սույն Համաձայնագրից բխող իր իրավունքները, շահերը և/կամ պարտավորությունները, առանց Ընկերության և մյուս Բաժնետերերի համաձայնության, իր դուստր կամ կախյալ

կազմակերպություններին, կամ Ռենշինի կամ վերջինիս մասնակիցների հետ փոխկապակցված անձանց:

XXX. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

30.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Համաձայնագրի առարկայի առնչությամբ Կողմերի միջև կնքված վերջնական համաձայնությունները, պայմանավորվածություններն ու պարտավորությունները սահմանող վերջնական գործարքը:

30.2. Սույն Համաձայնագրի կնքմամբ չեղյալ են ճանաչվում մինչև սույն Համաձայնագրի կնքումը Կողմերի միջև Համաձայնագրի առարկային վերաբերող բոլոր այլ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով ձեռք բերված համաձայնությունները, պայմանավորվածություններն ու պարտավորվածությունները, բացառությամբ Հիմնադրման Պայմանագրի, Որոշման, Ծրագրի իրականացման պայմանագրի և Ծրագրի:

XXXI. ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼԵԶՈՒ

31.1. Սույն Համաձայնագիրը կնքված է չորս հավասար իրավաբանական ուժ ունեցող բնօրինակից՝ հայերեն լեզվով:

31.2. Յուրաքանչյուր Կողմին տրվում է սույն Համաձայնագրի մեկական բնօրինակ:

XXXII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

32.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի պատշաճ կարգով լիազորված անձանց կողմից ստորագրվելու պահից:

32.2. Սույն Համաձայնագիրը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կառավարությունը հանդիսանում է Ընկերության բաժնետեր, բացառությամբ սույն Համաձայնագրի 32.4-րդ և 32.5-րդ կետերով սահմանված դեպքերի:

32.3. Բաժնետերերից յուրաքանչյուրը դադարում է սույն Համաձայնագրի Կողմ լինելուց, երբ վերջինս այլևս չի հանդիսանում Ընկերության բաժնետեր՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 32.4-րդ կետով սահմանված պայմանները:

32.4. Սույն Համաձայնագրի XXI-րդ, XXII-րդ, XXV-րդ և XXXII-րդ Բաժիններ գործում են անժամկետ և շարունակում են տարածվել սույն Համաձայնագրի Կողմերից յուրաքանչյուրի վրա՝ անկախ սույն Համաձայնագրի գործողությունը դադարելու (լուծվելու) հանգամանքից, ինչպես նաև անկախ նրանից, թե տվյալ անձը դադարել է սույն Համաձայնագրի Կողմ լինելուց, թե՝ ոչ:

32.5. Կառավարության բաժնեմասնակցությունը դադարելու դեպքում շարունակում են գործել և համապատասխան Կողմերի վրա շարունակում են տարածվել սույն Համաձայնագրի VIII-րդ, XVIII-րդ և XXIV-րդ Բաժինները, 7.2-րդ կետը և այդ կետով նախատեսված դեպքերում XII-րդ և XIII-րդ Բաժինները, ինչպես նաև 14.3-րդ կետը քանի դեռ Ռենշինը չի հրաժարվել դրանցով սահմանված իր համապատասխան իրավունքներից:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՋՈՐԴ ԷՋՈՒՄ

«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ

[•]
Գլխավոր տնօրեն

_____

Հայաստանի Հանրապետություն Ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության

Գևորգ Պապոյան
Նախարար

_____

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ

Արայիկ Աբրահամյան
Գլխավոր գործադիր տնօրեն

_____

«ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ

Էդուարդ Մարության
Գլխավոր տնօրեն

_____

Հավելված 1՝ «[---]» [---]ի 2024թ-ին կնքված «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի բաժնետերեր Հայաստանի Հանրապետության, «Հայփոստ» ՓԲԸ-ի, «Ռենշին» ՍՊԸ-ի և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրի

ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ամսաթիվ՝

*Ում կողմից **[միացող կողմի լրիվ անուն] [հասցե]** (**Միացող Կողմ**)*

Նախապատմություն

Սույն համաձայնագիրը կազմում է _____ 2024թ.-ին կնքված «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի բաժնետերեր Հայաստանի Հանրապետության, «Հայփոստ» ՓԲԸ-ի, «Ռենշին» ՍՊԸ-ի և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրի (այսուհետ՝ «Համաձայնագիր») լրացուցիչ մասը:

Պայմաններ

1. Սույնով Միացող Կողմը միանում է Համաձայնագրին:

2. Միացող Կողմը հաստատում է, որ վերջինիս տրվել է Համաձայնագրի պատճենը և վերջինս ամբողջությամբ ծանոթ է Համաձայնագրի բովանդակությանը, անվերապահորեն ընդունում է դրանք և ստանձնում է դրանցով նախատեսված համապատասխան իրավունքները և պարտականությունները:

3. Միացող կողմը Համաձայնագրի կողմերի առջև ստանձնում է հանձնառություն հետևելու, իրականացնելու և պարտավորված լինելու Համաձայնագրի բոլոր կիրառելի պայմաններով, որոնք վերաբերելի են ***[նշել այն կողմին, որից գնվում են բաժնետոմսերը կամ նոր թողարկված բաժնետոմսերի դեպքում՝ նշել այդ մասին (թողարկման և տեղաբաշխման ամսաթիվ, թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի քանակ, և այլն)]*** (այդ թվում՝ վերջինիս պատկանող՝ Ընկերության Բաժնետոմսերին) ՝ այն մտադրությամբ և արդյունքով, որ Միացող Կողմը կհամարվի Համաձայնագրի կողմ այն ժամկետից սկսած, երբ Միացող Կողմը գրանցվել է որպես Ընկերության բաժնետեր:

4. Միացող կողմն անվերապահորեն համաձայնում և ընդունում է, որ

   (ա) Համաձայնագրի հիման վրա ծագող Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքների, դադարման, առոչինչ ճանաչվելու և դրա հետևանքների, Համաձայնագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման և այլ

պարտականությունների նկատմամբ, ինչպես նաև Համաձայնագրից բխող կամ դրա կապակցությամբ ծագած վեճերի կամ տարաձայնությունների կապակցությամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության օրենքները.

(բ) Համաձայնագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, որոնք կարող են նախաձեռնվել Կողմերից որևէ մեկի կողմից ու իրականացվել գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված որևէ եղանակով, եթե Կողմերն առանձին բանակցության անցկացման այլ կարգ կամ եղանակ չեն նախատեսել: Բանակցությունների առավելագույն ժամկետը 30 օր է: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով ՀՀ դատարանների իրավասությունը, հանձնվելու է Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Դատարանի (ICC Arbitration Court) (այսուհետ՝ Արբիտրաժային դատարան) լուծմանը՝ Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան:

(գ) Կողմերի միջև որևէ վեճի լուծման արդյունքում վարույթի, այդ թվում՝ իրավաբանական ներկայացուցչության հետ կապված Կողմի կրած ծախսերը դրվում են պարտվող Կողմի վրա.

(դ) ծանոթ է Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին.

(ե) վերոնկարագրյալ արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի է ՀՀ օրենսդրությունը: Վեճերի քննությունն իրականացվում է ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան.

(զ) վեճերի լուծման համար ձևավորվում է եռակազմ արբիտրաժային տրիբունալ, որում ընդգրկված արբիտրներն ընտրվում (նշանակվում) են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան.

(է) Արբիտրաժային տրիբունալի որոշումները ենթակա են պարտադիր կատարման ՀՀ-ի ու աշխարհի այլ երկրների տարածքում.

(ը) Արբիտրաժային դատավարության լեզուն անգլերենն է, Արբիտրաժի վայրը՝ Բրյուսել, Բելգիա:

5. Միացող Կողմը անվերապահորեն և անհետկանչելիորեն համաձայնում է ստանձնել Համաձայնագրի Բաժին VIII-ով («ՀԱՅՓՈՍՏԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ») սահմանված պարտականությունները, մասնավորապես՝ այդ Բաժնով սահմանված կարգով և ժամանակացույցին համապատասխան ձեռք բերել Հայփոստի համապատասխան բաժնետոմսերը: Մասնավորապես, Միացող Կողմը պարտավորվում է Հայփոստի բաժնետոմսերը ձեռք բերել հետևյալ քանակով, ժամկետներում և արժեքներով՝

[լրացնել համապատասխան պայմանները]

[Սույն կետը կիրառելի է միայն Համաձայնագրի 8.6-րդ կետով նախատեսված դեպքերում:]

6. Համաձայնագրի նպատակներից ելնելով Միացող Կողմի ծանուցման հասցեները համարվում են վավեր, եթե նոր հասցեի մասին նախապես գրավոր ձևով չի ծանուցվել Միացող Կողմի կողմից:

Ում՝ *[---]*
Հասցե՝ *[---]*
Հեռախոս՝ +*[---]*
Էլ.փոստ՝ *[---]*

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ է որպես միացում

_____

Ստորագրություն

Հավելված 2՝ «[---]» [---]ի 2024թ-ին կնքված «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի բաժնետերեր Հայաստանի Հանրապետության, «Հայփոստ» ՓԲԸ-ի, «Ռենշին» ՍՊԸ-ի և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրի

Ծրագրի իրականացման ժամանակացույցը, բյուջեն և բնութագիրը

Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կազմում է մոտ **212 մլն ԱՄՆ** դոլարին համարժեք դրամ գումար՝ ներառյալ հողի արժեքը: Գնահատումը հիմնված է շուկայի շինարարական ոլորտի իրական ծախսերի վրա՝ բաղադրիչների որակին և նկարագրությանը համապատասխան ճշգրտումներով: Ծրագրի ընդհանուր ծավալները հանրագումարային կարող են փոփոխվել մինչև **20** տոկոսի չափով, իսկ ծախսային առանձին հոդվածներ կարող են տատանվել նույնիսկ ավելին:

Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել հետևյալ համամասնությամբ՝ **25** տոկոս սեփական կապիտալի, իսկ **75** տոկոս՝ փոխառու միջոցների հաշվին: Վերոգրյալ համամասնությունը կարող է փոփոխվել՝ սեփական կապիտալի հաշվին Ծրագրի ֆինանսավորումը հասցնելով մինչև **35** տոկոսի: Նման պայմաններում փոխառու կապիտալի ներգրավման համամասնությունը համապատասխանաբար կճշգրտվի: Ծրագրի իրականացման համար փոխառու միջոցները նախատեսվում է ներգրավել միջազգային և տարածաշրջանային ֆինանսաբանկային կառույցներից, հայաստանյան խոշոր բանկերից, ինչպես նաև ֆինանսավորման այլ կառույցներից:

<u>Ծրագրի իրականացման Ժամանակացույց</u>

2024 թվականի [լրացնել]	գործարքի ավարտ
2024 թվականի դեկտեմբերի 31	շինարարական հրապարակի պատրաստման սկիզբ
2025 թվականի դեկտեմբերի 31	շինարարության սկիզբ
2029 թվականի դեկտեմբերի 31	Ծրագրի վերջնաժամկետ՝ Համալիրի գործարկման սկիզբ

Ծրագրի իրականացման ծախսային հիմնական հոդվածները՝ ըստ ժամանակագրության, որոնք հիմնված են ընթացիկ շուկայական մակարդակի վրա՝ հաշվի առնելով գործարկումից հետո տարեկան գնաճային ինդեքսավորումը.

Ծախսերը	$ քմ		2024/2025	2026	2027	2028	2029
Կառուցապատման հոդվածներ							
Հողի արժեք		$28,000,000	$28,000,000				
Հարակից հողի արժեք		$20,000,000	$20,000,000				
Քանդում	50 $/քմ	$1,133,850		$1,133,850			
Միջազգային ճարտարապետներ	49 $/քմ	$6,000,000	$5,142,857	$857,143			
Տեղական ճարտարապետներ	19 $/քմ	$1,848,375	$1,584,321	$264,054			
Համաձայնություններ, թույլտվություններ		$50,000		$50,000			
Ենթակառուցվածքներ		$1,500,000			$750,000	$750,000	
Ավտոկայանատեղիների կառուցում	400 $/քմ	$15,600,000		$10,830,222	$4,769,778		
Կարկաս	450 $/քմ	$42,112,500		$7,750,000	$21,056,250	$13,306,250	
Ինժեներական համակարգեր	450 $/քմ	$37,326,250			$14,529,792	$22,796,458	
Ներքին հարդարանք / Ընդհանուր տարածքներ	300 $/քմ	$27,038,500			$12,970,083	$14,068,417	
Լանդշաֆտ	30 $/քմ	$1,503,245			$559,376	$943,869	
Ռիթեյլի ներքին հարդարանք		$6,000,000				$6,000,000	
Նախաբացման ծախսեր		$1,800,000				$1,800,000	
Պրոյեկտի կառավարման վճար	5%	$6,254,025		$929,011	$2,731,764	$2,593,250	
Մարքեթինգի/գործակալների վճարներ		$2,260,800				$753,600	$1,507,200
Ապահովագրություն	0.50%	$617,902		$92,901	$269,426	$255,575	
Բուֆեր	10%	$12,508,050		$1,858,022	$5,463,528	$5,186,499	
Ընդամենը կառուցապատման ծախսեր		**$211,553,497**	$54,727,178	$23,765,203	$63,099,997	$68,453,918	$1,507,200

Ծրագրի իրականացման մասով եկամուտների և դրամական հոսքերի կանխատեսումները ներկայացված են ստորև[3].

[3] **Հատուկ նշում՝** Ծրագրի վերաբերյալ վերոգրյալ կանխատեսումները հեռանկարային են, և փաստացի արդյունքները կարող են տարբերվել՝ կախված շուկայի զարգացող պայմաններից և չնախատեսված գործոններից՝ հաշվի առնելով տնտեսության դինամիկ բնույթը և փոփոխությունների նկատմամբ դրա զգայունությունը:

Հավելված 3՝ «[---]» [---]ի 2024թ-ին կնքված «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի բաժնետերեր Հայաստանի Հանրապետության, «Հայփոստ» ՓԲԸ-ի, «Ռենշին» ՍՊԸ-ի և «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրի

[Նամակի տեքստը կկցվի]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ